

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՆԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՆԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58
Բ 362

Բ 362 Բարձրագույն կրթության հիմնախնդիրները Հայաստանում.- Եր.:
Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոն,
2019.- 62 էջ:

Գրքույկը պարունակում է Հումանիտար հետազոտությունների
հայկական կենտրոնի «Բարձրագույն կրթությունը Հայաստանում.
խնդիրներ և հեռանկարներ» նախագծի արդյունքների ամփոփումը
(վերլուծություն և առաջարկություններ), որը նախատեսված է
ներկայացնել ԿԳՄՍ նախարարություն, կրթական հաստատություններ
և այլ շահագրգիռ կողմերին:

Նախագիծն իրականացվել է Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հետ
համագործակցությամբ և ֆինանսական աջակցությամբ:

Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի
գործունեությանը ընդհանուր աջակցություն է ցուցաբերել European
Endowment for Democracy հիմնադրամը:

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58

ISBN 978-9939-9238-0-2

© Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոն, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ.....	7
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	11
ԲՈՒՀԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՒ ԻՆՔՆԱԲԱՎՈՒԹՅՈՒՆԸ.....	21
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՇՐՋԱՆԱԿԱՐՏ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ	27
ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ` ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ	41
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	47
HIGHER EDUCATION ISSUES IN ARMENIA	57

Կրթության և գիտության հարցերը Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի գործունեության հիմնական ոլորտներից են: 2018 թ. Կենտրոնի կազմակերպած «Հայաստան 2018. Իրողություններ և հեռանկարներ» միջազգային գիտաժողովի (22-24.06.2018) պանելներից մեկը (վեց զեկուցում) նվիրված է եղել բարձրագույն և հետբուհական կրթության հարցերին:¹

Նկատի ունենալով Հայաստանում թավշյա հեղափոխության առաջ բերած հնարավորությունները և կարևորելով Հայաստանում կրթական բարեփոխումների անհրաժեշտությունը՝ Կենտրոնն իրականացրել է առանձին նախագիծ «Բարձրագույն կրթությունը Հայաստանում. ինդիկներ և հեռանկարներ» խորագրով:

Նախագծի իրականացման մեթոդաբանությունը մշակելիս՝ կազմակերպիչները ելել են հետևյալ երկու սկզբունքներից.

- ▶ Հնարավորինս խուսափել վերացական տեսաբանումից, կենտրոնանալ բուհական կրթության ոլորտում առկա դժվարությունների վրա, վերհանել հակասությունները և բարդությունները:
- ▶ Մտապահելով ՀՀ-ում բարձրագույն կրթության զարգացման իդեալական մոդելը՝ հիմնականում կենտրոնանալ անցումային ռազմավարության վրա՝ փորձելով քննել, թե ինչպես է կարելի առկա «ա» կետից հասնել բաղձալի «բ» կետը:

Նախնական վերլուծության արդյունքներից ելնելով՝ որոշվեց կենտրոնանալ բարձրագույն կրթության հետևյալ չորս առանցքային ինդիկների վրա.

- ▶ Ընթացիկ իրավիճակը հայաստանյան բուհերում և ՀՀ կառավարության ռազմավարությունը բարձրագույն կրթության բնագավառում.
- ▶ Բուհերի կարգավիճակը և նրանց տեղը հայ հասարակության

1 Չեկուցումները հասանելի են առցանց հետևյալ հղումով՝ <http://archumanities.am/category/video?page=3, wjg` 22.12.2019:>

մեջ բուհերի ֆինանսավորումն ու ինքնաբավությունը.

- ▶ Ձբաղվածությունը և սոցիալական խնդիրները, շրջանավարտ մասնագետների հեռանկարները.
- ▶ Ուսումնական բուհերից՝ հետազոտական կենտրոններ:

Նախագիծն իրականացվել է մի քանի փուլերով: Կազմվել է չորս ֆուկուս-խումբ՝ առանցքային խնդիրներին համապատասխան և ընտրվել է ութ փորձագետ՝ երկուական յուրաքանչյուր հարցի համար:² Ֆուկուսիմբերում անցկացված քննարկումների ընթացքում ուրվագծվել են ՀՀ բուհական համակարգում հիշյալ հարցախմբերի շրջանակում առկա խորքային խնդիրները և հետազոտության ելթակա տեսանկյունները: Հաջորդ փուլում իրականացվել են հարցազրույցներ տարբեր շահառուների հետ, ուսումնասիրվել են առկա ծրագրային փաստաթղթերը: Այս ամբողջի վրա հենված՝ ութ փորձագետները կազմել են ամփոփիչ գեկույցներ, որոնք ներկայացվել են հոկտեմբերի 19-ին և 20-ին տեղի ունեցած աշխատաժողովում: Աշխատաժողովին իրենց երկրների փորձն են ներկայացրել Նաև Վրաստանի և Բելառուսի ճանաչված փորձագետները:³

Ստորև ներկայացվում են իրականացված հետազոտության արդյունքների ընդհանրացումը և դրա հիման վրա ձևավորված եզրակացություններն ու առաջարկությունները:

2 Փորձագետների ցուցակը տե՛ս էջ 60:

3 Բոլոր գեկույցումներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ <http://archhumanities.am/category/video?page=1, այց՝ 22.12.2019>:

Ռազմավարական մոտեցումները

Վերջին հինգ տարիներին Կրթության և գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (մինչ այդ՝ ԿԳՆ) փորձել է ընդունել Բարձրագույն կրթության ռազմավարություն: Թերևս այս նպատակով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնին պատվիրվել է հետազոտություն:⁴ 2017-2018 թթ. նաև նախարարության աշխատանքային խումբը փորձել է մշակել «Կրթության զարգացման պետական ծրագիր», որում ներառված է նաև բարձրագույն կրթությունը: Այս ամենին զուգահեռ նախարարությունը 2016-2019 թթ. ներկայացրել է Բարձրագույն կրթության օրենքի երեք նախագիծ: Վերջին նախագիծը միավորում է բարձրագույն կրթությունն ու գիտությունը մեկ փաստաթղթում:

Նույն խնդիրը հավասարապես վերաբերում է կրթության բոլոր մակարդակներին, այդ թվում նաև՝ հանրակրթությանը: Վերջին 6-7 տարիներին Հայաստանի կրթության ոլորտում որևէ ռազմավարական փաստաթուղթ չի ընդունվել: *Նախարարությունը չունի որևէ օղակ*, որը կարող է իր վրա վերցնել ռազմավարական փաստաթղթերի մշակումը: *Ո՛չ Կրթության ազգային ինստիտուտը, ո՛չ համալսարանները չեն ապահովել այն մասնագիտական հենքը*, որի հիման վրա նախարարությունը կարողանար ձևավորել իր ռազմավարությունը:

Այսպիսով, նախարարությունը շարունակական փորձեր է ձեռնարկել բարձրագույն կրթության ռազմավարություն և օրենք ընդունելու ուղղությամբ, սակայն այդ փորձերից ոչ մեկն առայժմ հաջողության չի հասել:

Մյուս կողմից՝ ինդիահարույց է ռազմավարությունների, օրենքների նախագծերի մշակման ընթացակարգը: Դրանց մշակումը տեղի է ունենում առանց հիմնական սկզբունքների շուրջ մասնագիտական հանրության համաձայնությունը ստանալու: Հենց այդ համաձայնության բացակայության պատճառով են բոլոր նախագծերն արժանացել

4 Չեկույց. ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի վիճակը և բարեփոխումների ռազմավարական ուղղությունները, դեկտեմբեր 2018, https://asue.am/upload/files/amberd_reports/education.pdf, այց՝ 1.12.2019:

խիստ քննադատության և արդյունքում չեն ընդունվել: Ասվածի վկայությունն է նաև Բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքի վերջին նախագծի շուրջ ստեղծված հանրային իրարանցումը: Դրա մասնավոր, բայց ցայտուն օրինակն է այն, որ որոշում է կայացվել բարձրագույն կրթությունը և գիտությունը միավորել մեկ նախագծում առանց նախապես մասնագիտական համայնքի հետ քննարկումներ անցկացնելու: Նման դեպքերում նախարարության թիմը ստիպված է եղել և շարունակում է ստիպված լինել միայնակ պաշտպանել նախագիծը՝ արժանանալով գիտական ու կրթական համայնքի լուրջ դիմադրությանը:

Բարձրագույն կրթության ոլորտում առկա հիմնական հարցերից մեկն այն է, որ ոլորտի՝ փաստաթղթերով ամրագրված «քարտեզը» չի համապատասխանում «տեղանքին»՝ բուհերի առօրյային: Բուհերն ու գիտական հաստատությունները տասնամյակներով ձևավորված՝ ընդունելի կամ ոչ, առօրյա ունեն, որի բարեփոխմանը ուղղված ցանկացած քայլ, եթե քննարկված ու ընդունված չէ համայնքի կողմից, ընկալվում է իբրև ոչ միայն «օտար» փաստաթուղթ, այլ նաև համայնքը քայքայելուն ուղղված ձեռնարկ: Այդ պատճառով էլ փաստաթղթերը անտեսվում են, արժանանում անտարբեր վերաբերմունքի: Այսպես օրինակ՝ մեկ տասնամյակից ավել է, որ Հայաստանը անդամակցում է Բոլոնիայի կրթական գործընթացներին, այդուհանդերձ, այս փոփոխությունը հաստատություններում չի ընկալվում և ընդունվում ո՛չ դասախոսների, ո՛չ ուսանողների և ոչ էլ վարչական մարմինների զգալի մասի կողմից իբրև իրական առաջընթաց ապահովող փոփոխություն: Հայաստանում ընդունված բոլոր ռազմավարական փաստաթղթերը ընկալվել են որպես նախարարություններում այս կամ այն միջազգային պարտավորության շրջանակներում գրված շարադրություններ, այլ ոչ թե իրականությունը փոխելու անհրաժեշտ գործիքներ: Կրթությունն իրականացնող մարդկանց հետ աշխատելը, մարդկանց լսելը, մարդկանց համոզելը, երբեք չեն դիտվել որպես ռազմավարության մաս: Ենթադրվել է, որ մարդիկ կկարդան ռազմավարական փաստաթուղթը և կփոխեն իրենց վարքագիծը: «Վերևից» եկող այս հրամայականը տարիներ շարունակ ցույց է տվել իր ոչ միայն անարդյունավետությունը, այլ նաև սնանկությունը:

Քարտեզի և տեղանքի անհամապատասխանությունն առաջացել է նաև այն պատճառով, որ բարձրագույն կրթության «քարտեզը» գերիազեցած է տեխնիկական բառապաշարով, բազմակի մեկնաբանության տեղիք տվող ձևակերպումներով, կարճ՝ կրթության առօրյայի մեջ ներգրավված մարդուն ոչ միայն անհասկանալի, այլև օտար լեզվով: Բարձրագույն կրթության «տեղանքը»՝ կենսաշխարհը՝ գաղութացվել է տեխնիկական եզրույթներով, ինչն իր հերթին քողարկել է իրական խնդիրները և տեղ չի թողել ոչ միայն դրանց բացահայտման համար, այլ նաև լուծումներ առաջարկելու: Կարևորվել է ոչ թե այն, թե ինչ է արվում, այլ այն, թե որքանով է ամեն ինչ փաստաթղթավորված: Նույն խնդիրն առկա է նաև հանրության քննարկմանը առաջարկված Բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքի վերջին նախագծում:

Հատկապես վերջին շրջանում մեծ ուշադրություն է դարձվում կրթություն – աշխատաշուկա կապին, խոսվում է նաև կրթություն – հետազոտություն միասնության մասին: Սակայն բարձրագույն կրթության երրորդ հենասյունը՝ *համալսարանների քաղաքացիական, մշակութային առաքելությունը*, ընդհանրապես անտեսված է: Հետհեղափոխական Հայաստանում լավ նախադրյալներ են ստեղծվել համալսարանների քաղաքացիական առաքելությունը ուժեղացնելու ուղղությամբ: Սակայն դեռևս շոշափելի զարգացումներ չկան: Գուցե պատճառն այն է, որ այս բաղադրիչի զարգացման համար, ի տարբերություն մյուս երկուսի, դոկտրիները ներդրումներ չեն անում:

Համալսարանների վիճակի վրա մեծապես ազդում է նաև այն, որ դպրոցական կրթության տևողությունը երկու տարով երկարացվելու հետ մեկտեղ նվազել է ուսանողների աշխատաշուկա մտնելու տարիքը: 19-20 տարեկանում ուսանողների զգալի մասը սկսում է աշխատել: Այս իրավիճակում բարձրագույն կրթության տիրույթը կրճատվում է: Ըստ էության, բուհական կրթությունը բազմաթիվ ուսանողների համար տևում է 1-2 տարի, որից հետո նրանք սկսում են աշխատել, ընդ որում ուսման հաշվին: Արդյունքում, բուհերում լրջագույն խնդիր է դարձել դասերին հաճախելը և գրքեր կարդալը: Ուսանողների զգալի մասը զբաղված է այլ գործերով և չի կենտրոնանում սովորելու վրա: Առկա է նաև հակառակ միտումը: Ուսանողների մի փոքր խումբ, օգտ-

վելով ընծեմված լրացուցիչ հնարավորություններից՝ տարբեր տպագիր և թվային ռեսուրսներից, կարողանում է ձևավորել ուսման իր անհատական ուղին՝ շրջանցելով համալսարանների առաջարկած դասընթացները: Այսինքն՝ համալսարանները չեն կարողանում համադրել ուսանողի ինքնուրույն ուսումնական ուղեծիրը գործող ծրագրերի հետ: Դա հանգեցնում է համալսարաններից ուսանողների օտարմանը, որի հաղթահարումը պետք է դառնա բարձրագույն կրթության ապագա ռազմավարությունների առանցքը:

Շուկայական և վարչական տարրերը համադրող կառավարման մոդելը

Խորհրդային համակարգից անցման փուլում բուհերը, ենթարկվելով նոր իրողություններին, վերակազմակերպվեցին որպես ՊՈԱԿ-ներ: 2015 թ. սկսած ՊՈԱԿ-ների կարգավիճակ ունեցող բուհերը սկսեցին վերակազմակերպվել Հիմնադրամների՝ այն հիմնական պատճառաբանությամբ, թե՛ ՊՈԱԿ-ը՝ որպես իրավակազմակերպական ձև, ազատություն չի տալիս բուհերին ազատ ձեռներեցությամբ զբաղվելու: Թե՛ տարբեր բուհերի դասախոսներ, թե՛ պատասխանատուներ հիշում են, որ որքան էլ այս խոսակցություններն ակադեմիական միջավայրում պատվում էին տարիներ շարունակ, սակայն խոշոր հաստատությունները, ինչպիսին օրինակ ԵՊՀ-ն է, հիմնադրամի է վերածվել բառացիորեն մեկ գիշերում: Տարածված խոսակցություններ կան այն մասին, որ բուհերի իրավակարգավորման ձևի փոփոխությունը ՊՈԱԿ-ներից Հիմնադրամների հնարավորություն է տվել ռեկտորներին ևս 10 տարով երկարացնել իրենց պաշտոնավարումը, իսկ գործող իշխանությանը՝ իրենց հսկողության տակ պահել այս հաստատությունները՝ Հոգաբարձուների խորհրդի կազմը կուսակցականացնելով: Հետևաբար, բուհերի ինքնավարությունն ավելացնելու արտաքուստ դեկլարացված նպատակի տակ թաքնված է եղել մեկ այլ, գուցե ամենաիրական նպատակը՝ բուհերը պահել վերահսկողության տակ: Ի դեպ, Բարձրագույն կրթության և գիտության մասին ՀՀ օրենքի շրջանառվող նախագիծը կանխարգելում է որոշ այսօրինակ զարգացումներ: Այսպես, օրինակ, օրենքի նախագծում նշվում է, որ անկախ իրավակազմակերպական կարգավիճակի փոփոխությունից, ռեկտորի պաշտոնավարման ժամկետը չի կարող երկարացվել: (Հոդված 24, 8)

Չնայած քաղաքականություն մշակողների շրջանում, ինչպես նաև որոշ բուհերի ներսում շարունակաբար խոսվում է այն մասին, որ բուհերը պետք է ունենան առանձին կազմակերպչաիրավական կարգավիճակ, սակայն մինչ օրս այս խոսակցությունները լայն քննարկման առարկա չեն դարձել: Բոլոր այս փոփոխությունների մեջ տարիներով ներգրավված մարդիկ մտահոգություն ունեն, որ բուհական համակարգը միշտ հարմարեցվել է այս կամ այն կազմակերպչաիրավական ձևին՝ առանց մտահոգվելու, թե ինչքանով այդ ձևը համարժեք է բուհական կյանքի պահանջներին: Առայժմ լայն քննարկման առարկա չի դարձել նաև այն, թե ինչով ներկայիս կազմակերպչաիրավական կարգավիճակը բարենապաստ չի եղել բուհերի ինքնավարությունը ապահովելու հարցում և արդյո՞ք հնարավոր է առաջարկել այլ կազմակերպչաիրավական ձև բուհական համակարգի համար:⁵

Այնուամենայնիվ, եթե մի պահ վերանանք սրանից ու նայենք, թե գործունեության ինչ մոդել է դրվում Հայաստանում կրթական համակարգի բարեփոխումների հիմքում, կարող ենք տեսնել, որ ինչպես գործող օրենքով, այնպես էլ առաջարկվող օրենսդրական փոփոխություններով, նախատեսվում է բուհական համակարգը կառուցել մի կողմից՝ շուկայական մոդելով՝ հնարավորություններ տալով բուհերին ստեղծել կրթական իրենց ծրագրերն ու մոդելները և մրցակցել միմյանց հետ, մյուս կողմից՝ սրանով հանդերձ, բավական ուժեղ է մնում բուհերի արտաքին և ներքին ղեկավարումը վերահսկելու պետության հետաքրքրությունը: Գործող օրենսդրությամբ, բուհերի կառավարման խորհուրդները կազմված են դասախոսական կազմի, ուսանողների և հիմնադրի (այսինքն՝ կառավարության), ինչպես նաև ԿԳՄՍ նախարարության նշանակած անձանցից՝ հավասարապես 25% ներկայացվածությամբ, այսինքն՝ պետության նշանակած անդամների 50%-ի չափով: Օրենքի քննարկման դրված նախագծով Կառավարման մարմնի (Հոգաբարձուների խորհրդի) անդամների կազմը հավաքելու մեխանիզմը մնում է գրեթե նույնը՝ կրճատելով միայն անդամների քանակը:

5 Շրջանառվող օրենքի աշխատանքային նախագծին և այս հարցին ի արձագանք «Ես համալսարանական եմ» նախաձեռնությունը կազմակերպել է մի քննարկում: Տեսագրությունը հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=XH0rseu7Yp4&feature=youtu.be&fbclid=IwAR0RW_5VMz6P3Uj02GFrxnkrThliiQfGuwXSEPClYAXu25p_nwZS5dRV6HC, այց՝ 26.11.2019:

Ըստ նախագծի, սահմանվում է 12 անդամներից բաղկացած կառավարման խորհուրդ, որտեղ մեկ ներկայացուցիչ առաջադրվում է ուսանողական խորհրդի կողմից, չորսը՝ հիմնական ակադեմիական կազմից (առաջադրում է բուհի ակադեմիական խորհուրդը), մեկը՝ բուհի հետ համագործող կազմակերպություններից, իսկ մնացած վեցը՝ ԿԳՄՍ նախարարի առաջարկությամբ՝ Է՝ գործարարներից, կրթության, գիտության, մշակույթի կամ տնտեսության այլ ոլորտների ներկայացուցիչներից: (Հոդված 26) Նույն տրամաբանությամբ բուհերի Կառավարման մարմինը պատասխանատու է ռազմավարական զարգացման պլանի, տարեկան բյուջեի, ուսումնական պլանների, ուսուցման հարցերի և աշխատակազմի քաղաքականության պլանների մշակման համար: Բայց այս ամենը պետք է արժանանա նախարարության հավանությանը: Ավելին՝ բուհերը շարունակում են առաջնորդվել նախարարության ուղեցույցներով, երբ խոսքը վերաբերում է ընդունելությանը, կրթական ստանդարտներին և պետական ու մասնավոր բուհերի որակավորմանը:

Կառավարման մարմնի լիազորությունները և գործառույթները

Թեև օրենքի քննարկման դրված նախագիծը միանշանակ արգելում է ռեկտորի պաշտոնավարման կարգի մեջ փոփոխությունները՝ անկախ իրավակազմակերպական ձևի փոփոխությունից, օրենքի նախագիծը բուհերի իրավակարգավարման մեխանիզմների հետ կապված բազմաթիվ հարցեր է առաջ բերում:⁶ Բուհերում Հոգաբարձուների խորհուրդների գործունեությունը երկար ժամանակ կրել է ձևական և ոչ թե բովանդակային բնույթ, ինչը պայմանավորված է եղել այս հաստատությունների ինստիտուցիոնալ կուսակցականացմամբ: Կուսակցականացման լծակները դրսևորվել են առաջին հերթին բուհերի Հոգաբարձուների խորհուրդների կազմում քաղաքական պաշտոններ զբաղեցնող բարձրաստիճան պաշտոնյաների ներգրավմամբ: Այդ մոտեցման շնորհիվ հոգաբարձուները նաև մեկուսացվել են իրենց գլխա-

6 Հոգաբարձուների խորհրդի վերաբերյալ նախագծի աշխատանքային տարբերակին իրենց առաջարկություններն են ներկայացրել ԵՊՀ-ում ստեղծված «Ես համալսարանական եմ» նախաձեռնությունը: Տե՛ս «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրինագծում առկա են մի շարք խնդրահարույց կետեր. հայտարարություն»,

վոր առաքելությունից և սկսել են լուծել քաղաքական նպատակներ հետապնդող հարցեր, օրինակ՝ մեծ ուսանողական թվակազմ ունեցող բուհերում ձեկտորների ուղղորդված ընտրություն, երիտբուհականների ակտիվ մասնակցություն կուսակցական քարոզչական և ընտրության գործընթացներում: Չարմանալի չէ, որ հոգաբարձուների կազմում ընդգրկված «արտաքին» անդամների վարքագիծն ու մոտեցումները տարածվել են նաև բուհի ներկայացրած «ներքին» անդամների գործելաոճի վրա՝ էլիմինացնելով սկզբունքայնության մնացորդները:

Հոգաբարձուների խորհուրդների գործունեության արդյունավետությունը, ըստ էության, պայմանավորված է նաև օրենքով սահմանված իրենց լիազորությունների ոչ հստակությամբ: Քննարկման և ուսումնասիրության առանձին հարց է նաև, թե արդյո՞ք որևէ մեկը կարող է արդյունավետ աշխատանք իրականացնել, եթե նա միաժամանակ մի քանի բուհերում Հոգաբարձուների խորհրդի անդամ է, արդյո՞ք 5 տարի ժամկետով ընտրված անձը, որը հաճախ չունի համապատասխան հմտություններ՝ բուհի գործունեության արդյունավետության գնահատման համար կոմպետենտ մարդ է:

Այս տեսանկյունից կարևոր է հասկանալ նաև, թե ինչպես է տեղի ունենում Հոգաբարձուների խորհրդի անդամների ընտրության գործընթացը, որը կարելի է սահմանել նաև որպես ընտրության բացակայություն: Մասնավորապես, լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով նախանշվում է, թե ովքեր կարող են դառնալ Հոգաբարձուների խորհրդի արտաքին և ներքին անդամներ: Երկու պարագայում էլ, իհարկե, այդ չափանիշներն այնքան ընդհանրական են և ոչ հստակ, որ թե՛ լիազոր մարմինը և թե բուհը կարող են այդ չափանիշների ներքո դիտարկել և ընտրել ցանկացած մեկին: Հետաքրքրական է նաև այն, որ ուսումնասիրության շրջանակում ֆոկուս-խմբային քննարկման մասնակից ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչը, ով նաև պատասխանատու է բուհերի հետ աշխատանքների իրականացման մասով, նույնպես չներկայացրեց, թե անգամ հետհեղափոխական նոր Հայաստանում ինչ սկզբունքների հիման վրա են ընտրվել բուհերի Հոգաբարձուների խորհուրդների նոր անդամները: Կարող ենք արձանագրել, որ խորհրդի անդամների ընտրության իրական չափանիշներ

ամկա չեն, այլ հիմնականում գործում է մարդու ազնվության գնահատման ինտուիտիվ չափանիշը: Վերջինս որքան էլ կարևոր գործոն է, բայց դրանով հնարավոր չէ ստեղծել գործուն ընտրական մեխանիզմներ:

Ըստ Եռության, Հոգաբարձուների խորհրդի անդամների ոչ արդյունավետ գործունեությունը պայմանավորված է նաև նրանով, որ այս անդամների ընտրությունը տեղի է ունենում ոչ մասնակցային, ոչ թափանցիկ ընթացակարգերով: ամկա չեն պրակտիկաներ, երբ բուհերը ներքին անդամներ ընդգրկելու նպատակով հայտարարեն բաց մրցույթներ, ներգրավեն մոտիվացված ներքին շահակիցներ: Պրակտիկայում տարածված է Հոգաբարձուների խորհրդի անդամների ներքին կազմում ունենալ բուհի ռեկտորի գործունեությունը ամբողջությամբ սատարող, «իր թիմի» ներկայացուցիչ դասախոսներ և ուսանողներ: Այս երևույթները վկայում են խորհրդի՝ որոշումների կայացման գործընթացի հակաժողովրդավարական մշակույթի ամկայության մասին: Մասնավորապես, որպես կանոն, խորհրդի որոշումները պրակտիկայում կայացվում են միաձայն համաձայնեցված և առանց լրացուցիչ, մանրամասն քննարկումների ու բանավեճերի: Միևնույն ժամանակ, պրակտիկայում տարածված են նաև դեպքեր, երբ Հոգաբարձուների խորհուրդների կազմում ընդգրված արտաքին կամ ներքին անդամները խմբավորված փորձեր/աշխատանքներ են իրականացնում՝ տապալելու այս կամ այն որոշումը:

Կառավարման խորհրդի ներքին և արտաքին ներկայացուցիչների ընտրության վերաբերյալ միասնական կարծիք գոյություն չունի: Սովորաբար պնդում են, որ ներքին անդամները ավելի լավ են պատկերացնում բուհի տեսլականը և բարձրագույն կրթության համատեքստը, ավելի լավ գիտեն իրենց համալսարանների առանձնահատկությունները և ավելի նվիրված են նրանց: Մյուս կողմից՝ արտաքին անդամները կարող են դիտվել որպես այս մարմինները ավելի արժեքավոր դարձնողներ (հատկապես ֆինանսների և իրավունքի ոլորտներում): Սակայն դարձյալ հստակ չէ ո՛չ խորհրդում ընդգրկվող արտաքին և ներքին անդամների համամասնությունը, ոչ էլ վերջիններիս համադրմամբ արդյունավետ գործակցության չափանիշները:

Ինչպես հաստատված է ներկայումս, մեծամասամբ հայաստանյան պետական բուհերում կառավարման մարմինները լավագույնս չեն ներկայացնում բարձրագույն կրթական համակարգը թե՛ համակարգային և թե՛ ինստիտուցիոնալ մակարդակներում, ինչպես նաև ներկայացուցչական չեն մասնակիցների տարիքի, սեռի, մասնագիտական պրոֆիլի և մշակութային կապիտալի տեսանկյուններից: Եթե ընդունում ենք, որ կառավարման մարմինները առանցքային դերակատարություն պետք է ունենան բուհի զարգացման համար, ապա պե՞տք է արդյոք, որ նրանք ավելի ներկայացուցչական դառնան՝ ներկայացնելով իրենց քաղաքացիական, ակադեմիական և մասնագիտական համայնքները, թե՞ պետք է հրաժարվել ներկայացուցչականության սկզբունքից (որը, ինչպես արդեն տեսնում ենք, բազմաթիվ խնդիրներ է առաջացնում) և խորհրդի արտաքին ու ներքին կազմը որոշելիս այլ չափանիշներ կիրառել:

Այս ամբողջ շղթան եզրափակելու է գալիս այն, որ ՀՀ-ում բուհերի գործունեությունը կարգավորող, նրանց արդյունավետությունը վերահսկող մի շարք կառույցներ կան՝ Որակի ապահովման ազգային կենտրոն, աուդիտ իրականացնող կազմակերպություններ, որոնք, ըստ Էության, մասնագիտացված աշխատանք են իրականացնում. աշխատանք, որը գործառնության և լիազորությունների տեսքով տրամադրվում է ոչ մասնակցային, ոչ թափանցիկ, ոչ հստակ չափանիշներով ընտրված կառույցներին՝ Հոգաբարձուների խորհուրդներին:

Բուհերի ֆինանսավորման ծավալները և աղբյուրները

Կրթությունը ՀՀ ներկայիս (ինչպես նաև Նախորդ) կառավարության կողմից հռչակված է որպես գերակա ոլորտ: Չնայած սրան, պետության կողմից տրամադրվող ֆինանսական միջոցները վերջին տասնամյակում հստակ նվազման միտում են ցույց տալիս: Այսպես, 2008-2018 թթ. կրթության ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեում 13.42%-ից նվազել է 9.38%-ի, իսկ բարձրագույն կրթության ծախսերի տեսակարար կշիռը տատանվել է 0.7%-ից (2013) 0.83%-ի միջակայքում (2018):⁷

Պետական ծախսերի մասնաբաժինը բարձրագույն կրթության համար նույնպես ցածր է, միջինում կազմում է 8%: Համեմատության համար՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) անդամ երկրներում միջինը 21% և ԵՄ-ում 23% է:⁸

Ցածր է նաև բարձրագույն կրթությանը հատկացվող մասնաբաժինը: Այն կազմում է ՀՆԱ-ի ընդհամենը 0.2%-ը, ինչը միջազգային համեմատության մեջ հիևզ անգամ նվազ է ԵՄ-ի (միջինում 5.8%) և ՏՀՀԿ-ի անդամ երկրների 6.1%-ի ցուցանիշներից:

Նման իրավիճակում պետության կողմից բուհերին տրվող ֆինանսավորման միջոցների նվազումն անխուսափելի է դարձնում բուհերի կախվածությունն ուսանողների ուսման վարձերից: Պետության կողմից ֆինանսավորումը բուհերի ֆինանսական միջոցների ամբողջության մեջ կազմում է մոտավորապես 21%, ինչը բավականին ցածր ցուցանիշ է: Օրինակ՝ ըստ 2018 թ. Երևանի պետական համալսարանի հաշվետվության, պետական միջոցներից ֆինանսավորումը կազմել է բուհի բյուջեի 32%,-ը իսկ 68%-ը գոյացել է ուսման վարձերից:⁹

7 Տե՛ս Չեկույց. ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի վիճակը և բարեփոխումների ռազմավարական ուղղությունները, դեկտեմբեր 2018, https://asue.am/upload/files/amberd_reports/education.pdf, այց՝ 26.11.2019:

8 Տե՛ս Չեկույց. ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի վիճակը և բարեփոխումների ռազմավարական ուղղությունները, դեկտեմբեր 2018, https://asue.am/upload/files/amberd_reports/education.pdf, այց՝ 26.11.2019; տե՛ս նաև Կոռուպցիայի դեմ պայքարը և բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթության ոլորտում, http://www.osf.am/wp-content/uploads/2017/01/INTES_am.pdf, այց՝ 26.11.2019:

9 Տե՛ս «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ 2018 թ. եկամուտների և ծախսերի

Ավելորդ չէ նշել, որ հայաստանյան բուհերի ուսանողների համար ներկայումս գործող ուսման վարձերը՝ «ուսման վարձ / մեկ շնչին հասնող եկամուտ» չափանիշի առումով, զգալիորեն բարձր են միջազգային ցուցանիշներից (տե՛ս ստորև ներկայացված աղյուսակը): Եվ չնայած սրան, բուհերն ի վիճակի չեն բավարար չափով ֆինանսավորել ոլորտն ու կրթության որակ ապահովել:¹⁰

Ուսման վարձերի տարեկան միջին մեծությունները՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի հաշվով, Հայաստան (2013 թ.), Սերբիա (2009 թ.) և ընտրված ՏՀԶԿ երկրներ (2008 թ.)

Երկիրը	Տարեկան ուսման վարձի և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի հարաբերակցությունը	Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն ԱՄՆ դոլարով՝ ըստ գնողունակության համարժեքության
Հայաստան	35.0%	3505
Սերբիա	27.0%	5630
Կորեա	19.1%	27858
Իռլանդիա	15.7%	40744
Ճապոնիա	13.9%	33115
Միացյալ Նահանգներ	13.7%	46125
Սլովակիայի	12.6%	21555
Հանրապետություն		
Նոր Զելանդիա	11.2%	26948
Ավստրալիա	10.8%	38493
Կանադա	9.8%	38527
ՏՀԶԿ ընտրված երկրների մեդիանա	7.6%	
Պորտուգալիա	5.4%	22899
Նիդեռլանդներ	4.5%	40682
Իտալիա	4.3%	29657
Իսպանիա	3.4%	30252
Ֆրանսիա	2.2%	33598
Ավստրիա	2.2%	39241
Շվեյցարիա	2.1%	41045
Բելգիա	1.6%	35812

Նախահաշվի կատարողական (հունվար-սոյնմբեր), http://documentation.yso.am/wp-content/uploads/2019/01/Byujei_kataroghakan_2018.pdf, այց՝ 26.11.2019:

10 Կոռուպցիայի դեմ պայքարը և բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթության ոլորտում, http://www.osf.am/wp-content/uploads/2017/01/INTES_am.pdf, այց՝ 26.11.2019:

Պետական ֆինանսավորումն ավելացնելու, ինչպես նաև ֆինանսավորման ձևաչափը փոխելու անհրաժեշտությունը կարծես թե մշտապես ընդունվել է կրթության ոլորտի պատասխանատուների կողմից: Դեռևս 2011 թ. կառավարության ընդունած բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությամբ նախատեսվում էր ստեղծել պետական ֆինանսավորման նոր կառուցվածք՝ հիմնված բուհերի կատարողականի վրա:¹¹ Սակայն այս ռազմավարության գրեթե ոչ մի դրույթ այդպես էլ ընթացք չստացավ:

Ներկայումս քննարկվող Բարձրագույն կրթության և գիտության մասին ՀՀ օրենքի նախագծով պետական ֆինանսավորման փոփոխությունները կարծես ստանում են նոր թափ: Այսպես օրինակ, պետական ֆինանսավորման 3 եղանակ է նախատեսվում, ըստ որոնց բուհերին տրվող ֆինանսավորումը տարանջատվելու է ուսանողների համար նախատեսված պետական կրթաթոշակներից, ինչպես նաև հավելյալ ֆինանսավորում է տրվելու բուհերին մրցութային սկզբունքներով, եթե դրանք համապատասխանում են որակի, բովանդակության, գիտահետազոտական աշխատանքների և այլ սահմանված չափանիշներին: Օրենքը շրջանառում է նաև ինստիտուցիոնալ մատով տրվող ֆինանսավորման մեջ կատարողական բաղադրիչի ներմուծումը: (Հոդված 32) Առաջարկվող նախագծում չկան մանրամասներ այն մասին, թե ինչ ընթացակարգերով է իրականացվելու պետական հատկացումների այս նոր ձևը:

Ակադեմիական բարեվարքությունը և կրթության որակը ֆինանսավորման խնդրի համատեքստում

ՀՀ պետական բուհերի կախվածությունը ուսման վարձերից հանգեցնում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների միջև «լուռ և հանցավոր համաձայնության» առ այն, որ բուհում վատ առաջադիմություն ունեցող ուսանողները կրթական ծրագրից չեն հեռացվում, նրանց հանդեպ սահմանվող կրթական պահանջները մեղ-

11 Տե՛ս Հայաստանի հանրապետության բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարություն, https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/MAR25-45_1-1.pdf, այց 26.11.2019:

մացվում են, քանի որ նրանց վարձավճարներից է կախված բուհի հիմնական ֆինանսավորումը: Սա իր հերթին խաթարում է կրթական գործընթացի որակը, բացասաբար անդրադառնում բուհերի վարկանիշավորման վրա և նվազեցնում հասարակության մեջ բարձրագույն կրթության հանդեպ վստահությունը:

Իրավիճակն ավելի է բարդանում, երբ հաշվի է առնվում գնալով պակասող ուսանողների հոսքը պետական բուհեր, կապված մի կողմից՝ ավագ դպրոցի լիարժեքորեն չգործելու, մյուս կողմից՝ Հայաստանում առկա ժողովրդագրական խնդրի հետ: Ուսման վարձերից կախվածությունը բուհերի համար ստեղծում է ճգնաժամային իրադրություն, որի արդյունքում բուհերը գոյատևելու համար ստիպված են լինում դիմել վարկային միջոցների ձեռքբերմանը: Գիտակցելով այս իրավիճակը՝ որոշ բուհեր փորձ են անում խնայողություններ անել իրենց եկամուտների 10-15% -ի չափով:

Ֆինանսական միջոցների կառավարումը

Կրթության ոլորտի մի շարք զեկույցներում, ինչպես նաև անհատական զրույցների արդյունքում ստացված տեղեկությունների համաձայն, ներկայումս գործող ՀՀ բուհերի մեծամասնությունը չունի բավարար կարողություն արդյունավետորեն կառավարելու իր ֆինանսական և մնացած նյութական միջոցները: Ըստ 2015 թ. Եվրոպական համալսարանական ասոցիացիայի գնահատականի, Հայաստանում բուհերի ֆինանսական ինքնավարության ցուցանիշը կազմում է 66%:¹² Այս փաստաթղթում ֆինանսական ինքնավարություն է համարվում բուհի՝ ներքին ֆինանսական գործերում ազատորեն որոշում կայացնելու, եկամուտները տնօրինելու և կառավարելու ունակությունը: Ըստ այս գնահատականի, Հայաստանի բուհերի ֆինանսական սահմանափակումներից Եր դրանց կազմակերպարավական ձևը, այն է՝ բուհերի մեծամասնության պետական ոչ-առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) լինելը:

12 Տե՛ս University Autonomy in Armenia: Analysis and Roadmap, https://athena-tempus.eu/images/Armenia%20ATHENA%20analysis%20and%20roadmap_Final.pdf, այց՝ 26.11.2019:

Չնայած 2015 թ. սկսած բուհերի մեծամասնությունը ՊՈԱԿ-ներից վերակազմակերպվեց Հիմնադրամների, ինչը բուհերի ֆինանսական կառավարման տեսանկյունից ավելի շահավետ որոշում էր թվում, ուսումնասիրությունները մատնանշում են բուհերի ֆինանսական կառավարման ինստիտուցիոնալ կարողությունների պակաս, ինչը դրսևորվում է սեփական գումար հայթայթելու, ֆոնդերի բազմազանեցման և մասնավոր սեկտորի հետ համագործակցային հնարավորություններն օգտագործելու դժվարություններում:

Քննարկումների արդյունքում, առաջ եկավ երկու հարց: *Առաջին*. պետությունը բուհերի նկատմամբ պետք է սահմանի հաշվետվողականության հստակ պայմաններ, այսինքն՝ նրանց ներկայիս վիճակի համար ավելի հարմարեցված ու կատարելագործված հաշվետվողականության կարգավորումներ: Կրթության և գիտության օրենքի նախագծի համատեքստում օրակարգային է դառնում KPI-ների (key performance indicator) հիման վրա իրականացվող ֆինանսավորումը, որն ուղղված է բուհերի և պետության միջև փոխհարաբերությունների կարգավորմանը:

Երկրորդը՝ բուհերի ներքին օղակների ապակենտրոնացման հարցն է, որի ապահովման համար անհրաժեշտ է սահմանել այդ օղակների (հիմնականում ֆինանսական) ազատության պայմանները: Նաև այս խնդրի լուծման համար՝ KPI-ների հիման վրա հաշվետվողականության կարգավորումները դիտվում են կարևոր:

Այս և նման առաջարկները գնահատելի են, բայց բուհերի ներկայիս պայմաններում, եթե հաշվի ենք առնում բարեվարքության բազմաթիվ խախտումները և ներկայիս կառավարման համակարգի վիճակը, սրա գործադրումը դեռևս անհնար է:

Կրթություն – աշխատաշուկա կապը

Ըստ 2018 թ. կատարված վիճակագրության, 2017-2018 ուսումնական տարում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն է ստացել 90.540 ուսանող, որոնցից 78.747-ը (87%-ը) սովորել է բարձրագույն կրթության առաջին աստիճանում, իսկ 11.793-ը (13%)՝ բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում: 78.747 ուսանողներից 69.376-ը (88%-ը) սովորել է պետական բուհերում և մասնաճյուղերում: 78.747 ուսանողներից 51.923-ը (66%) սովորել է ամլա ուսուցման համակարգում, 26.824-ը (34%)՝ հեռակա ուսուցման համակարգում: Պետական բուհերում բարձրագույն կրթության առաջին աստիճանում բակալավորի կրթական ծրագրերին մասնակցող ուսանողների 85%-ը սովորել է վճարովի, իսկ 15%-ը՝ անվճար, ընդ որում, անվճար հիմունքներով սովորող ուսանողները ուսանել են բացառապես պետական բուհերում և մասնաճյուղերում: Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում մագիստրոսի կրթական ծրագրերի մասնակցող ուսանողների թիվը կազմել է 11.793, որոնցից 31%-ը սովորել է անվճար, իսկ 69%-ը վճարովի հիմունքներով: Անվճար հիմունքներով սովորող ուսանողների 97%-ը ուսանել են պետական բուհերում, դրանց մասնաճյուղերում և 3 գիտական հաստատություններում:¹³

Ինչպես տեսանք, բուհերում ձեռք բերվող կրթությունը հիմնականում վճարվում է ուսանողների կողմից: Համալսարաններում տրվող կրթության որակի հետ կապված հնչած տարբեր գնահատականներում հստակ է մի բան, որ տրվող կրթության որակը հաճախ կամ հիմնականում չի համապատասխանում դրա դիմաց պահանջվող գումարին: Մինևույն ժամանակ, ձեռք բերված կրթությունը որակապես չի համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին: Թե ինչի հիման վրա է որոշվում այս կամ այն բուհի կամ մասնագիտության համար սահմանվող գինը, պարզ չէ, ինչպես նաև հայտնի չէ, թե ինչպես են տատանվում գները՝ հիմնականում բարձրանալով, երբ կրթության որակը Եական անկում է ապրում:

13 Ըստ՝ Չեկույց. ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի վիճակը և բարեփոխումների ռազմավարական ուղղությունները, դեկտեմբեր 2018, https://asue.am/upload/files/amberd_reports/education.pdf, այց՝ 30.11.2019:

Այստեղ ևս ունենք պարադոքսալ վիճակ: Մի կողմից՝ հետազոտության ընթացքում հարցազրույցյին մասնակցող ուսանողներն ու գործատուները վկայում էին, որ տրվող կրթությունը շատ հաճախ չի համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին, և իրենց ստացած կրթությամբ ուսանողները չեն կարողանում աշխատել և գոնե հետ բերել իրենց ուսման համար վճարված գումարները: Մյուս կողմից՝ սակայն, հիմնականում բնագիտական թևի կողմից Նշվում էր, որ առկա գները նույնիսկ ցածր են, քանի որ իրենց շրջանավարտները կարողանում են գտնել անհամեմատ բարձր վարձատրվող աշխատանք: Բայց այստեղ էլ խնդիրն այն է, որ, քանի որ ուսման վարձերը ցածր են, իսկ ոլորտը՝ թանկ, բարդ է լինում կրթական պրոցեսի մեջ ներգրավել որակյալ մասնագետներ:

Անդրադառնալով բուհ – աշխատաշուկա կապին՝ կարևոր է ուշադրության առնել նաև գործող կրթական փորձաշրջանները՝ ուսումնա-արտադրական պրակտիկաները: Հայաստանում կրթական պրոցեսն առայժմ սահմանափակված է միայն տեսական գիտելիքների մատուցմամբ՝ առանց դրանք կիրառականի հետ համադրելու: Ուսանողները ձեռք բերած գիտելիքը փորձարկելու և նոր արդյունք ստանալու համար հենց ուսումնառության տարիներին կարիք ունեն փորձաշրջանների: Համալսարանների մեծ մասում վերջինս ձևական բնույթ է կրում՝ ուսանողները փորձում են խուսափել դրանցից, քանի որ մեծ բան ձեռք չեն բերում, իսկ դասախոսները գնահատականներ շարելով լեզբիտմացնում են ձևական պրոցեսը: Կրթական այս բաղադրիչը բուհերում կարիք ունի լուրջ արդիականացման:

Մի կողմից՝ կրթության թե՛ առաջին, թե՛ երկրորդ աստիճան ունեցող ուսանողների մեծ մասը չի կարողանում իր մասնագիտությամբ աշխատանք գտնել, մյուս կողմից՝ աշխատաշուկայում որակյալ մասնագետների կարիք է զգացվում միշտ: Քննարկումների ընթացքում, աշխատաշուկայի դերակատարության մասին խոսելիս, Նշվեց, որ այս պահին աշխատաշուկայի ներկայացուցիչներից շատերը հանդես են գալիս որպես պարզ սպառողներ, քանի որ նրանք ստանում են արդեն պատրաստի մասնագետներ, բայց չեն մասնակցում այդ մասնագետների պատրաստման գործընթացին: Ավելին՝ գործարարները

լուրջ զուճարներ են աշխատում, իսկ կադրեր պատրաստող կառույցներն ունեն ֆինանսական խնդիրներ: Այս խնդիրը լուծելուն է ուղղված եղել բուհերի կառավարման խորհուրդներում որոշակի տոկոսով աշխատաշուկան ներկայացնողներ ներգրավելը, և թվում է, թե այդ քայլը պետք է որ որոշակի արդյունք տար, թեև ինչպես վերևում տեսանք, առայժմ զգալի տեղաշարժեր չկան:

Մասնագիտական որակի հարցեր

Առանձին հարց է այն, թե ով է ի վերջո այս կամ այն մասնագիտության պատվիրատուն: Եթե, օրինակ, շուկան պահանջում է միայն տեխնիկական ոլորտի մասնագետ, արդյո՞ք պիտի հումանիտար ոլորտի այս կամ այն մասնագիտությունը դադարի գոյություն ունենալուց և հակառակը: Այսօր Հայաստանում քիչ թե շատ վարձատրվող մասնագիտություն է համարվում միայն IT ոլորտը, բայց մյուս մասնագիտությունների գծով նույնպես ահռելի քանակությամբ շրջանավարտներ են պատրաստվում ամեն տարի, որոնց վրա ծախսեր է անում նույն ինքը՝ պետությունը: Արդյո՞ք այս մասնագետներն անհրաժեշտ են Հայաստանին այս քանակությամբ ու այս որակով:

Հարցվածների հիմնական մոտեցումն այն էր, որ կրթության ֆինանսավորման նման սխեման, երբ ուսանողի վճարած ուսման վարձից է գոյանում բուհի հիմնական ֆինանսավորումը, բացասաբար է անդրադառնում նաև պոտենցիալ ունեցող և մոտիվացված փոքրաքանակ ուսանողներից որակյալ մասնագետներ ստանալու վրա: Մյուս կողմից՝ տնտեսության գոյություն ունեցող (հիմնականում ծառայություններ մատուցող և սպառում ապահովող) կառուցվածքի պայմաններում բուհը միայնակ չի կարող հասկանալ, թե ինչ մասնագետ է անհրաժեշտ այդ տնտեսությանը, բացի պարզ աշխատուժից, ինչն էլ, մեծ հաշվով, պատրաստվում է: Այս պայմաններում պետությունը, իր անվտանգությունից ելնելով, կարող է և պետք է սահմանի առաջնահերթություններ: Առայժմ այդ առաջնահերթությունները ռազմական ոլորտին են վերաբերում, և այս ոլորտին է տրամադրվում նաև միջոցների մեծ մասը: Հայաստանում կան ոլորտներ, որտեղ մոտակա տարիներին պարզապես մասնագետ չի լինի, ոչ թե որովհետև դրա կարիքը չկա, այլ որովհետև այդ մասնագետները պարզապես չկան:

(Որպես օրինակ հիշատակվել է հիդրոինժեներների պակասը, և դա այն դեպքում, երբ առկա է պահանջարկ, ապահովված է համեմատաբար բարձր աշխատավարձ, իսկ ոլորտը կարևոր է նաև ազգային անվտանգության տեսակետից:)

Թե՛ քննարկումները, թե՛ օրենքի նոր նախագիծը չի սահմանում պետության կամ պետական գերատեսչությունների կողմից շուկայի ու իր պահանջարկների տարանջատում ըստ որևէ ցուցիչի (մասնագիտություններից կամ այլ կարգի առաջնահերթություններից ելնելով), ինչպես նաև չի առաջարկում հարաբերությունների կարգավորումներ: Նման նախաձեռնություն չեն ցուցաբերում նաև բուհերը՝ հասկանալու, թե իրենք շուկայի ու պետության միջև ինչպես են ձևավորում իրենց կրթական ծրագրերն ու ինչ մասնագետներ կարող են պատրաստել՝ ելնելով նաև իրենց նյութատեխնիկական բազայից ու մասնագիտական ռեսուրսներից:

Մյուս խնդիրն այն է, որ Հայաստանի բարձրագույն կրթությունը, ըստ էության, դարձել է զանգվածային, սակայն համակարգը գործում է այն տրամաբանությամբ, որ դեռևս գործ ունենք սելեկտիվ կրթական համակարգի հետ: Այս ամենի արդյունքում, կտրուկ անկում է արձանագրել բարձրագույն կրթության որակը: Բազային ցածր գիտելիքներ ունեցող ուսանողները ուսման տարիներին որպես կանոն Էական աճ չեն ունենում:

Ուսանողների սոցիալական խնդիրները բուհերում. ուսման վարձերի զեղչեր և կրթաթոշակներ

Ուսման վարձերի խնդիրը շարունակում է մնալ ուսանողների գլխավոր սոցիալական խնդիրներից մեկը: Բացի այն, որ հստակ չէ, թե ինչպես է գոյանում ուսման արժեքը և ինչպես է այն փոփոխվում, համալսարաններում գործող զեղչային համակարգը բավականին թերի է և ոչ արդյունավետ: Հասկանալի չէ նաև, թե ինչպես է սահմանվել ուսանողին տրվող 5000 դրամ կրթաթոշակը, որն անփոփոխ է արդեն մոտ երեք տասնամյակ:

Վճարովի համակարգում սովորող ուսանողների որոշակի խմբերի՝ հիմնականում սոցիալական անապահովության նվազագույն միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների ուսանողները, ՀՀ կառավարությունից ստանում են մասնակի փոխհատուցում ուսման տարեկան վարձավճարի ամսվազն 50%-ի չափով:¹⁴ Բուհերն իրենց հերթին ֆինանսական որոշակի աջակցություն են ցուցաբերում դարձյալ սոցիալական անապահովություն ունեցող, բազմազավակ ընտանիքների, միակողմանի ծնողազուրկ կամ միաձնող ուսանողներին, հաշմանդամության կարգ ունեցող ծնողների ուսանող զավակներին, ժամկետային զինվորական ծառայության ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած, 2016 թ. ապրիլյան «քառօրյա պատերազմի» մասնակից ուսանողներին և այլն:

Հարց է, թե ի՞նչ է նշանակում ուսման վճարը զեղչել կամ զեղչ տրամադրել: Իրականում զեղչ որպես այդպիսին, գոյություն չունի, այլ ուղղակի կոնկրետ ուսանողների պարագայում նրանց կրթության համար ամբողջությամբ կամ մասնակի վճարում է ոչ թե ուսանողը, այլ պետությունը կամ ուսումնական հաստատությունը: Այստեղ խնդիրն այն է, որ պետության ու բուհի կողմից կատարվող մասնակի կամ ամբողջական վճարումը սոցիալական ծանրագույն խնդիրներ ունեցող ուսանողներին է վերաբերում բացառապես: Պետք է նկատի առնել նաև, որ համալսարաններում այժմ չեն գործում առաջադիմության համար տրվող զեղչեր, հետևաբար ուսանողը չունի լրացուցիչ մոտիվացիա՝ սովորելու ու իր վճարման բեռը թեթևացնելու առումով:

Պետպատվերով սովորող ուսանողի կրթության համար վճարում են պետությունն ու բուհը: Պետության կողմից ուսանողին տրվող 5000 դրամ կրթաթոշակը այսօրվա պայմաններում որևէ հարց չի լուծում որևէ սոցիալական խմբի պատկանող ուսանողի համար: Եվ եթե վճարովի համակարգում սովորող ուսանողի կրթավճարը լրիվ կամ մասնակի վճարելու պարագայում պետությունը կամ բուհը սոցիալական որոշակի աջակցություն են ցուցաբերում սոցիալական ծանր վիճակում

14 Ըստ՝ Չեկույց, ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի վիճակը և բարեփոխումների ռազմավարական ուղղությունները, դեկտեմբեր 2018, https://asue.am/upload/files/amberd_reports/education.pdf, էջ 22, այց՝ 1.12.2019:

գտնվող ուսանողին, ապա 5000 դրամ կրթաթոշակը մեծ հաշվով որևէ հարց չի լուծում:

Լրջագույն հարց է նաև այն, թե ինչպես են որոշվում մասնագիտությունների համար տրվող պետպատվերների տեղերը, և ինչու պետությունը և բուհը պետք է վճարեն այդ մասնագիտությունների համար: Որևէ տեղ չարձանագրված, բայց ընդհանուր մոտեցումն այն է, որ որոշ մասնագիտությունների համար տրվող պետպատվերները նրա համար են, որ ամբողջությամբ չփակվեն այդ մասնագիտությունները, որքան էլ որ մեծ հաշվով այդ կերպ պահվող մասնագիտություններով որակապես լավ մասնագետներ չեն պատրաստվում: Այստեղ կարիք կա խորքային հետազոտության՝ ի հայտ բերելու պետպատվերի ինստիտուտի չգործառող հատվածները:

Պրոֆեսորադասախոսական կազմի և բուհական աշխատակիցների սոցիալական խնդիրները

ՀՀ պետական բուհերը 2018 թ. դրությամբ ունեցել են 17.291 աշխատակից, այդ թվում՝ 9.662 (ընդհանուրի 56%-ը) գիտամանկավարժական և գիտական աշխատակազմն է: Հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի թիվը 6.800 է (39,3%), իսկ մյուս աշխատողների թիվը՝ 10.491 (60,7%): Դասավանդող անձնակազմ – ուսանողներ հարաբերակցությունը պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում կազմել է 0.096: Ոչ դասավանդող անձնակազմ – ուսանողներ հարաբերակցությունը՝ 0.14:¹⁵ Կրթության ոլորտում միջին աշխատավարձը 120.000 դրամի շրջանակներում է, ինչն Եականորեն զիջում է ՀՀ միջին աշխատավարձի ցուցանիշին: Դասախոսական կազմի աշխատավարձերի շուրջ թե՛ ակադեմիական շրջանակներում, թե՛ հասարակության մեջ առկա է կոնսենսուս առ այն, որ աշխատավարձերը շատ ցածր են և որ այդպիսի աշխատավարձերի պայմաններում դժվար է ակնկալել միջազգային ստանդարտներին համապատասխան ու մրցունակ կրթություն:

15 Ըստ՝ Չեկոյց. ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի վիճակը և բարեփոխումների ռազմավարական ուղղությունները, դեկտեմբեր 2018, https://asue.am/upload/files/amberd_reports/education.pdf, Էջ 14, այց՝ 1.12.2019:

Հատկանշական է, որ հարցազրույցի մասնակիցները բուհերի՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմին ուղղված սոցիալական ծրագրերի վերաբերյալ կամ տեղեկություններ չունեին կամ էլ հայտնում էին, որ այդպիսիք չկան: Միայն ԵՊՀ աշխատակիցները նշեցին, որ համալսարանը դասախոսական կազմի հանգստի անցկացման համար ուղեգրեր է տրամադրում ԵՊՀ Ծաղկածորի ուսումնական բազա:

Վերջին մեկուկես տարվա ընթացքում, նոր իշխանությունների ձևավորումից հետո փոփոխվեցին Հոգաբարձուների խորհուրդների կազմերը, հրաժարական տվեցին որոշ ռեկտորներ, ընտրվեցին և/կամ նշանակվեցին նորերը: Այս տեղաշարժերն իրենց հերթին առաջ բերեցին նոր գործընթացներ բուհերի ներսում. տեղի ունեցան կառուցվածքային փոփոխություններ, կադրային նոր քաղաքականություններ իրականացվեցին, նոր հաստիքացուցակների հաստատումներ և հաստիքների կրճատումներ եղան: Այս գործընթացների համատեքստում առաջանում են մի շարք սոցիալական խնդիրներ, որոնք նույնպես կարիք ունեն լուրջ ուշադրության:

Բուհերի հետ կապված մշտական քննարկման թեմա է եղել և դեռևս շարունակում է մնալ համալսարանների վարչական ուժնացվածությունը: Հարցազրույցներից մեկի ընթացքում մասնակիցը անգամ կատակեց, թե համալսարաններում առկա են օգնականների տեղակալներ, լաբորանտների օգնականներ և այլն: Բարեփոխումներ անվան հետ մասնավորապես կապվում են կադրերի «երիտասարդացման» ուղղությամբ արվող քայլերն ու հաստիքացուցակների կրճատումները, ընդհանուր անվանմամբ՝ օպտիմալացումները: Վերջիններս հետապնդում են ռեսուրսների բաշխման արդյունավետությունը բարձրացնելու նպատակ: Հարցազրույցների ընթացքում հնչեցին կարծիքներ, թե վարչական օպտիմալացման նպատակներից մեկն էլ խնայված գումարների հաշվին դասախոսական անձնակազմի աշխատավարձերը բարձրացնելն է:

Կադրերի երիտասարդացման քայլով հիմնականում նպատակ է դրվում բարձրացնել կրթության որակը: Հանրությունը՝ մասնավորապես ուսանողները, ակնկալում են կտրուկ և շեշտակի փոփոխություններ

այս ոլորտում: Նրանք ցանկանում են տեսնել դասավանդման որակի կտրուկ բարձրացում, իսկ հարցազրույցների և քննարկման շատ մասնակիցների կարծիքով այդպիսի փոփոխությունների համար պետք են երիտասարդ, մոտիվացված կադրեր: Հարցազրույցների ընթացքում շեշտվեց նաև, որ տարեց մասնագետները հաճախ չեն տիրապետում ժամանակակից հմտությունների, ինչպիսին են օրինակ՝ համակարգչային հմտությունները, և անչափ բարդ է համոզել նրանց նոր հմտությունների ձեռք բերել:

Պետք է նկատի առնել, որ բուհում դասավանդող դասախոսների եկամուտները չեն գոյանում միայն բուհում դասավանդելով: Նրանք ոչ միայն ստիպված են մի քանի տեղ աշխատել, այլ նաև՝ հաճախ և հիմնականում կրկնուսուցչությամբ զբաղվել: Բարձր մասնագիտական կարողություններ և հմտություններ ունեցող դասախոսների եկամուտները նույնպես, որպես կանոն, չեն գոյանում աշխատավարձերից: Դասավանդումը նրանց համար շատ հաճախ իրենց սիրելի կրթական հաստատության կամ մասնագիտության առջև բարոյական պարտավորություն է միայն:

Այս պայմաններում կադրային կտրուկ քաղաքականություն վարելը սոցիալական բազմաթիվ խնդիրներ է առաջացնում: Երիտասարդ կադրերի ներգրավման փորձերի, նոր չափանիշներով ընտրություններ կատարելու արդյունքում մի շարք աշխատակիցներ, չհամապատասխանելով սահմանված չափանիշներին, հայտնվում են աշխատանքը կորցնելու շեմին: Այսպիսի վտանգների առջև հայտնվեց ՀՊՏՀ-ն:¹⁶ Սույն թվականի ապրիլի 30-ին տեղի ունեցած գիտական խորհրդի նիստում ընդունվել էր «ՀՊՏՀ գիտամանկավարժական կազմի ընտրության և տեղակալման» կանոնակարգը, որի մեջ կադրային քաղաքականության նոր չափանիշներ էին ամրագրվել: Ըստ այդմ, օրինակ՝ միջազգային գիտաժողովի մասնակցության, երկարամյա դասախոսական աշխատանքի փորձի և գիտական աստիճանի համար տրվում էր միևնույն միավորը: Այս չափանիշներով պիտի իրականացվեր մրցույթ: Կանոնակարգում տեղ գտած այս կետը անհան-

16 ՀՊՏՀ-ում մրցույթ է հայտարարվել. դասախոսների 70 տոկոսը կարող է գործազուրկ դառնալ, <https://www.shantnews.am/news/view/402627.html>, այց՝ 1.12.2019:

գատություն պատճառեց շատ դասախոսների, քանի որ «միջազգային գիտաժողովների մասնակցության» չափանիշին շատերը չէին համապատասխանում, բայց ունեին բազմամյա աշխատանքային ստաժ և/կամ գիտական կոչում: Նրանք պնդում էին, որ անարդար է նույն քանակի միավոր տալ և՛ միջազգային գիտաժողովի մասնակցության, և՛ աշխատանքային ստաժի, և՛ գիտական կոչման համար: Միևնույն ժամանակ բոլորին է հայտնի, որ նախկինում նմանատիպ մրցույթներ գործնականում գրեթե չէին անցկացվում և դասախոսների՝ ժամկետները լրացած պայմանագրերը երկարացվում էին ինքնըստինքյան՝ գրեթե առանց հաշվի առնելու նրանց գրանցած մասնագիտական արդյունքը:

Մյուս դեպքը ԵՊՀ-ն է, որտեղ նույնպես ահազանգեր եղան կրճատումների մասին, մասնավորապես կապված որոշ կառուցվածքային փոփոխությունների հետ: ԵՊՀ Հոգաբարձուների փոփոխված կազմով խորհուրդը որոշեց լուծարել Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը¹⁷ և մի շարք այլ հաստիքներ:¹⁸ ԵՊՀ-ում մյուս մեծ հուզումը Հայոց լեզու և գրականություն ու Հայոց պատմություն առարկաների դասավանդման մեջ պարտադիր բաղադրիչը բուհական կրթական ծրագրերից հանելու հետ էր կապված: Ուսանողական ու դասախոսական կազմի հուզական հայրենասիրական ընդլզման հետևում դժվար չէր նկատել, որ երկու ֆակուլտետ ԵՊՀ-ում կարող է հայտնվել սոցիալական լուրջ մարտահրավերների առջև: Առաջ եկած հուզումները ոչ միայն ի հայտ բերեցին այն խորքային խնդիրները, որոնք ձևավորվել են տասնամյակներ շարունակ որոշակի քաղաքականությունների արդյունքում, այլև հարց այն մասին, թե ի՞նչ եղանակներով են բուհերն իրականացնում կարգային փոփոխությունները, կամ նախարարությունը՝ ծրագրային փոփոխությունները, որո՞նք են այն հիմնական ռիսկերը, որոնք առաջանում են նմանատիպ փոփոխությունների արդյունքում և վերջապես, ինչպիսի՞ սոցիալական

17 ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի տնօրենն իր մտահոգությունն է հայտնել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նիստի վերաբերյալ. մամուլի ասուլիս ԵՊՀ-ում, <http://www.yasu.am/news/hy/Press-conference-Vahagn-Varagyan>, այց՝ 1.12.2019:

18 ԵՊՀ արհեստակցական միության բաց նամակը ՀՀ վարչապետին, <http://www.yasu.am/news/hy/YSU-Trade-Union-Announcement-31-01-2019>, այց՝ 1.12.2019:

հեռանկարներ ունեն աշխատանքի ազատման եզրին կանգնած կամ աշխատանքից զրկված աշխատակիցները:

Ի պատասխան մեր այն հարցին, թե արդյո՞ք բուհը պետք է կրի սոցիալական պատասխանատվություն կադրային քաղաքականության փոփոխության, կրճատումների արդյունքում աշխատանքը կորցրած պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների համար, բոլոր մասնակիցները հաստատակամորեն պատասխանեցին, որ բուհերը սոցիալական խնդիրներ չեն լուծում և/կամ ստեղծված չեն սոցիալական խնդիրներ լուծելու համար: Սա ընդհանուր կարծիք էր: Բուհերի գործունեության համատեքստում այս գաղափարի գերակայությունն ինքնին հասկանալի է, բայց միևնույն ժամանակ խնդիր է այն, որ այս հարցը երբեք դրված չի եղել քաղաքականությունն իրականացնողների օրակարգում: Սոցիալական պատասխանատվության վերաբերյալ հարցազրույցների և քննարկման մասնակիցները նշում էին, որ այդ գործառույթը պետք է հանձն առնի պետությունն ի դեմս Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության: Մասնակիցների պնդմամբ տարեց դասախոսների աշխատանքից չհեռանալու հիմքում հիմնականում սոցիալական դրդապատճառներ են, այսինքն՝ աշխատավարձն է ստիպում մարդկանց դասավանդել մինչև խոր ծերություն: Ուստի, եթե թոշակների և նպաստների համակարգը թույլ տա տարեցին թոշակի անցնելուց հետո արժանապատիվ կյանք վարել, այս խնդիրը մեծամասամբ կլուծվի և այդժամ առավել հեշտ կլինի բուհերի համար տարբեր մեխանիզմներ մշակել այն տարեց մասնագետների համար, որոնք ցանկանում են գտնվել համալսարանում և որևէ այլ ձևով իրենց ավանդն ունենալ բուհերի գործունեության մեջ:

Այս պահին չունենք որևէ գործող դեպք, երբ բուհը նոր չափանիշներով կազմակերպված մրցույթների արդյունքում դուրս մնացած մասնագետների սոցիալական խնդիրները լուծելու և/կամ նրանց մասնագիտական պոտենցիալը օգտագործելու ուղղությամբ քայլեր է ձեռնարկել: Միայն ՀՊՏՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը նշեց, որ ՀՊՏՀ նոր ղեկավարությունը այս ուղղությամբ ծրագրեր է մտածում:

Ուսանողների և դասախոսների շահերի ներկայացվածությունը բուհերում. պաշտպանական մեխանիզմներ

Թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների շահերի ներկայացվածությունը և պաշտպանվածությունը շարունակում են լրջագույն խնդիր մնալ հայաստանյան բուհերում: Որքան էլ այս մասով արված հետազոտություններ չկան, ուսանողների իրավունքների խախտման բազմաթիվ դեպքեր կարող ենք հիշել վերջին տարիներին: Ուսանողների շահերի պաշտպանությունն իրականացնող համալսարանական կառույցները՝ ուսանողական խորհուրդներն իրենք այս առումով չափալետ չեն գործել: ԵՊՀ-ում, օրինակ՝ բացի ուսանողական խորհրդից, գործում է նաև Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը, որի պաշտոնական ներկայացումից ամեն դեպքում չի երևում, թե այն զբաղված է ուսանողների շահերի պաշտպանությամբ և վերջիններիս համալսարանական կյանքի մեջ ներգրավելուն: Ավելին, Նույն ԵՊՀ-ի օրինակով՝ այս կառույցները հաճախ աչքի են ընկել ոչ թե ուսանողների շահերը պաշտպանելով, այլ դրանք խախտելով:¹⁹ Այս դրության ծնունդն է համալսարանի ներսում ծնունդ առած և այս պահին արտահամալսարանական գործունեություն ծավալող ուսանողության շահերը պաշտպանող Ռեստարտ ուսանողական քաղաքացիական նախաձեռնությունը:

Վիճակն ավելի բարենպաստ չէ աշխատակիցների դեպքում: Բոլոր ուսումնական հաստատություններում գործում են արհեստակցական կազմակերպություններ, որոնց գործունեության հետ կապված աշխատակիցները հիշում են միայն ամանորյա տոնական միջոցառումներին տրամադրվող տոմսերն ու մարտի 8-ի նվերները: Ընդհանուր առմամբ արհմիությունների գործունեության հանդեպ զգալի է խորը անտարբերություն, որը ենթադրել է տալիս, որ արհմիությունները չեն դիտվում որպես աշխատակիցների շահերի պաշտպանության և աշխատակիցներին ներկայացնող կարևոր կառույցներ:

19 Մակրամասները տե՛ս Davit Petrosyan, Factual Situation of the Rights of the Students and Professors: A Comprehensive Analysis (Yerevan, 2018): Այս ոլորտում արված գրեթե եզակի այս հետազոտությունը հրատարակության փուլում է:

Սակայն ի տարբերություն ուսխորհուրդների և այլ կենտրոնների՝ վերջին մեկ տարվա ընթացքում տեղի ունեցող օպտիմալացումների համատեքստում նկատվում են ինչպես աշխատակիցների՝ իրենց իրավունքները պաշտպանելու դեպքեր, այնպես էլ ակտիվացել է համալսարանական այս կառույցների գործունեությունը: Այս առումով հատկապես աչքի է ընկնում ԵՊՀ-ն, որտեղ աշխատակիցները դատական հայցերով սկսեցին վիճարկել իրենց աշխատանքային պայմանագրերը լուծելու որոշումները, իսկ աշխատանքը կորցնելու եզրին կանգնած աշխատակիցները դատարանի միջոցով չեղարկեցին Հոգաբարձուների խորհրդի որոշումը:²⁰ Այս պահին ԵՊՀ-ի հետ կապված դատական կարգով որոշումները վիճարկելու բազմաթիվ դեպքեր կան:²¹ Կան նաև կառուցվածքային փոփոխությունները նույն կարգով վիճարկելու դեպքեր:²² Այս համատեքստում իր գործունեությունը վերհիշել է ԵՊՀ արհմիությունը՝ հիմնականում ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի որոշումները վիճարկելով:²³

Հարցագրույցներին մասնակցողները նշեցին նաև, որ եթե աշխատանքային օրենսգիրքը թույլ տար, հնարավոր է կրճատումները կրեին առավել ինտենսիվ և մասշտաբային բնույթ:

20 Վահագն Վարազյան. դատարանը պարտավորեցրել է ԵՊՀ ղեկավարությանը մեզ չազատել աշխատանքից, <https://www.panorama.am/am/news/2019/08/23/%D5%8E%D5%A1%D5%B0%D5%A1%D5%A3%D5%B6-%D5%8E%D5%A1%D6%80%D5%A1%D5%A3%D5%B5%D5%A1%D5%B6/2157102>, այց՝ 1.12.2019:

21 Հայցերին կարելի է ծանոթանալ այստեղ՝ <http://www.datalex.am>, այց՝ 30.11.2019:

22 ԵՊՀ գիտաշխատողները պատրաստվում են բողոքի ակցիա իրականացնել ՀՀ կառավարության շենքի դիմաց, <http://www.yso.am/news/hy/Scientists-are-getting-ready-for-a-protest-action-at-the-building-of-the-RA-Government>, այց՝ 1.12.2019:

23 ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ֆեյսբուքյան Էջ, <https://www.facebook.com/youtu.am/posts/2542290289189006>, այց՝ 1.12.2019:

**ԿՐԹԱԿԱՆ ՎԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ՝
ՎԵՏԱՇՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ**

Գիտությանը տրվող միջոցները և առկա հնարավորությունները

2012-2018 թվականներին հետազոտությունների և մշակումների ֆինանսավորման ծավալը Հայաստանի Հանրապետությունում տատանվել է 9.356-11.929 մլն դրամի շրջանակներում, որից 6.750-9.300 մլն-ը իրականացվել է պետական միջոցների հաշվին, իսկ 2.463-2.962 մլն-ը՝ այլ միջոցների: Հետազոտությունների ներքին ֆինանսավորումը հիմնականում իրականացվել է Գիտության պետական կոմիտեի դրամաշնորհային ծրագրերի հաշվին: Մասնավոր հատվածից հետազոտությունների և մշակումների նպատակով բուհերին և ՀՀ ԳԱԱ կառույցներին հատկացված օժանդակությունը և պատվերների ծավալը կամ աննշան է կամ որևէ այլ պատճառով չի հաշվառվել:²⁴

Ըստ Գիտության պետական կոմիտեի նախագահի վերջերս Ազգային ժողովում ներկայացրած տվյալների, Հայաստանի գիտական հիմնարկներում Կոմիտեի կողմից ֆինանսավորվող աշխատողների քանակը 2019 թ. դրությամբ 6.056 է,²⁵ որոնցից գիտաշխատողներ են 4.950-ը: Նույն զեկույցի բացահայտումներից մեկն այն էր, որ Հայաստանում 35-55 տարիքային միջակայքում գիտությամբ զբաղվող մասնագետների խորը ճգնաժամ կա: Սա գիտնականների այն տարիքն է, երբ նրանք քիչ թե շատ հաստատվում են գիտության մեջ և հեռանկարային ծրագրերով ու բարձր վարձատրվող աշխատանքով հեռանում Հայաստանից: Այս տարիքի գիտնականները կազմում են գիտությամբ զբաղվողների մոտ 15-16%-ը, որը շատ ցածր ցուցանիշ է Հայաստանում գիտության մեջ սերնդափոխություն կազմակերպելու առումով: Այս տարիքային խմբի խիստ փոքրաթիվ լինելն ունի նաև դեմոգրաֆիկ պատճառ. սա այն սերունդն է, որը մասնակցել է Ղարաբաղյան պատերազմին:

Առհասարակ Հայաստանում գիտությունը տարիքային առումով երիտասարդացնելու և գիտական ավանդույթը փոխանցելու խորը ճգնաժամ կա, եթե ոչ՝ խզում: Ֆոկուս-խմբային քննարկումների ժա-

24 Ըստ՝ Չեկույց. ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի վիճակը և բարեփոխումների ռազմավարական ուղղությունները, դեկտեմբեր 2018, https://asue.am/upload/files/amberd_reports/education.pdf, էջ 23-24, այց՝ 1.12.2019:

25 Տես՝ <https://www.youtube.com/watch?v=7rnVUzuyh3E>, 54:35, այց՝ 1.12.2019:

մանակ շեշտադրվեց այն, որ բուհական հաստատություններն իրենց ներկա պայմաններով ոչ միայն գրավիչ չեն գիտությամբ զբաղվելու համար, այլև զուրկ են գիտության զարգացման համար անհրաժեշտ պարզ պայմաններից: Թեկնածուական աստիճան ունեցող դասախոսի միջին աշխատավարձը մոտավորապես 120.000 դրամ է, որի շրջանակներում տարեցտարի ավելանում են լսարանային ժամերը և կրճատվում այլ աշխատանքներին տրվող ժամաքանակը: Ակադեմիայի համակարգում աշխատող գիտաշխատողը համարյա կեսով ցածր է վարձատրվում՝ ստիպված լինելով իր մինիմալ եկամուտն ապահովել այլ աշխատանքներով: Թե՛ բուհական հաստատությունների, թե՛ ակադեմիական հիմնարկների լաբորատորիաները հեռու են ժամանակակից լինելուց: Այստեղ սարքերը չեն թարմացվել ավելի քան երեք տասնամյակ: Գիտական արդյունք ակնկալող գիտնականը գիտափորձերն իրականացնում է հիմնականում եվրոպական կամ ռուսաստանյան լաբորատորիաներում, մեծ մասամբ՝ ոչ պետական կամ տեղական հաստատությունների ֆինանսավորմամբ: Նույն կերպ նաև գրադարանները, որոնք չեն թարմացվում միջազգային գիտական հրատարակություններով, վերջիններս սիստեմատիկ կերպով միջոցներ չեն տրամադրում անհրաժեշտ գիտական գրականությունը ձեռք բերելու, միջազգային գիտական ամսագրերին բաժանորդագրվելու համար:

Ինստիտուցիոնալ հենք՝ ֆինանսավորում և պայմաններ չունեցող գիտնականը միայն նվիրումով է գիտություն անում: Նույնիսկ եթե կան աշխատավարձային հավելումներ գիտական հրատարակությունների համար (ինչպես, օրինակ, ԵՊՀ-ում), դրանք այնքան չնչին են, որ չեն կարող երիտասարդի համար գիտությամբ զբաղվելու ազդակ հանդիսանալ: Եվ եթե նույնիսկ այս պայմաններում գիտնականին հաջողվում է գիտական արդյունք ստանալ, նա դժվար թե գտնի ինստիտուցիոնալ աջակցություն՝ իր ստացած գիտական արդյունքը միջազգային գիտական հանրությանը ներկայացնելու և փորձաքննություն անցնելու համար. այստեղ լուրջ գումարներ են պահանջվում ոչ միայն գրախոսվող ամսագրերում տպագրվելու, այլև open access համակարգերում ներգրավվելու համար: Գիտական փորձաքննությունը լավագույն դեպքում մնում է տեղական մակարդակում՝ իր հետ բերելով տևաբույծ գիտության անցանկալի սինդրոմը:

Գիտության գործնական կողմը

44

Հայաստանում գիտությունը որակապես ցածր մակարդակի գտնվելու վկայություն կարող է համարվել այն հանգամանքը, որ շահագրգիռ կազմակերպությունները այս կամ այն բնագավառում ընթացիկ հետազոտություն անցկացնելու կամ խորհրդատվություն ստանալու համար գերադասում են պատկառելի գումարներ ծախսել՝ դիմելով միջազգային փորձագետներին և շրջանցելով սեփական ակադեմիան: Դա վերաբերում է ինչպես առանձին կազմակերպություններին, այնպես էլ ՀՀ կառավարությանը: Վերջինիս պարագայում հատկանշական է Ամուլսարի խնդրի վերաբերյալ միջազգային փորձաքննության դիմելու դեպքը: Բայց կա նաև մեղալի երկրորդ կողմը: Արդյո՞ք կառավարությունը լիարժեք օգտագործում է սեփական գիտնականներին դիմելու հնարավորությունը, թե՞ ապրիորի ենթադրում է, որ Հայաստանում գիտական հաստատություններն ու գիտական կենտրոնները չունեն այն ներուժը, որ կարողանան աջակցել պետությանը ռազմավարական նշանակություն ունեցող հարցերի մշակման գործում: Նույն Ամուլսարի հետ կապված իրավիճակը (երբ կառավարությունը վերջին պահին դիմեց ԳԱԱ համապատասխան ինստիտուտին՝ ակնկալելով երկու օրվա ընթացքում և անվճար ստանալ փորձագիտական եզրակացություն, որի նմանի համար միջազգային կազմակերպությանը մեծ գումար էր վճարել և զգալի ժամանակ տրամադրել) թույլ չի տալիս բացառել նաև այս եզրակացությունը:

Ամեն դեպքում այս համատեքստում խիստ խնդրական է ընկալվում Բարձրագույն կրթության ու գիտության օրենքի նախագծի այն կետը, ըստ որի՝ Գիտությունների ազգային ակադեմիային տրվում է հատուկ կարգավիճակ, «որի հիմնական գործառույթը գիտության զարգացման և գիտահետազոտական գործունեության արդյունքների ներդրման, ինչպես նաև հանրապետության տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման ուղղությամբ համապատասխան ոլորտի պետական քաղաքականություն մշակող և իրականացնող մարմիններին խորհրդատվության տրամադրումն է» (Հոդված 25), քանի որ որևէ բան չի ասվում այդ կարգավիճակի և նրա ապահովման ուղիների մասին:

Գիտություն – կրթություն կապը

Գիտական հանրության մոտ անտարակուսելի է մոտեցումը, որ կրթությունը պետք է ուղեկցված լինի գիտությամբ, չնայած այն հանգամանքին, որ, ինչպես տեսանք, Հայաստանում ինստիտուցիոնալ ամուսնով գիտություն անելը գրեթե անհնարին է դարձել: Այն, ինչն այսօր մատուցվում է համալսարաններում իբրև գիտելիք, հաճախ հնացած է և գործածությունից դուրս եկած: Իրենց հերթին կրթական ծրագրերում բացակայում է հետազոտական մասը. ուսանողը, բացառությամբ առանձին դեպքերի, ամիթ չի ունենում հետազոտություն կատարել ու հետազոտական հմտություններ ձեռք բերել ուսումնառության տարիներին:

Թվում է, թե ակադեմիական գիտելիքի և ուսումնառության միջև առաջացած անջրպետը կարելի էր լուծել ակադեմիական ու համալսարանական հաստատությունների միջև ընդհանուր ծրագրերով: Սակայն, վերջին տարիների զարգացումն այլ ուղղությամբ է գնացել. ՀՀ ԳԱ ակադեմիան ինքն իր բազայի վրա ստեղծել է մագիստրոսական ծրագրեր, իսկ բուհերի ներքին օղակներում նկատվում են դեպքեր, երբ առանձին լաբորատորիաներ, օգտագործելով հարաբերական ազատությունը, կապ են հաստատում օտարերկրյա հիմնարկների հետ, ինչը հնարավորություն է տալիս որոշակի գիտական ծրագրեր իրականացնել:

Վերջին մեկուկես տարիների ընթացքում բարեփոխումների անցկացման փորձը, Կրթության և գիտության մասին նոր օրենքի աշխատանքային նախագծի քննարկումները, ինչպես նաև օրերս հանրությանը ներկայացված վերամշակված նախագիծը ցույց են տալիս, որ Նախարարությունը կանգնած է դժվարին մարտահրավերի առջև: *Մի կողմից՝* բուհերում տարիների ընթացքում ձևավորված կրավորական միջավայրի հաղթահարման համար անհրաժեշտ են կտրուկ վարչարարական քայլեր «վերևից», *մյուս կողմից՝* այդ քայլերը պետք է ոչ թե խաթարեն բուհերի ակադեմիական ինքնավարության կարևորագույն սկզբունքը, այլ մեծապես նպաստեն նրա արմատավորմանը և ինստիտուցիոնալ կայացմանը, այսինքն՝ բուհական ակտիվությանը «ներքևից»:

Այս բարդագույն խնդրի լուծման ընդհանուր բանաձև չկա: Բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքի ընդունումը կարող է լինել միայն առաջին քայլը, քանի որ այն որոշակի լծակներ է տալիս կողմերին, սակայն հասկանալիորեն չի անդրադառնում կոնկրետ իրավիճակների հանգուցալուծումներին: Ստորև կսահմանափակվենք առանձին հիմնահարցերի հետ կապված դիտարկումներով, որոնք, հնարավոր է, օգտակար լինեն բարեփոխումների իրականացման ճանապարհին:

Ա. Կառավարման (Հոգաբարձուների) խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացումը

Նոր օրենքի նախագծով առաջարկվող Կառավարման խորհուրդների անդամների թվի կրճատումը նպատակահարմար չի թվում հետևյալ պատճառներով.

- ▶ Դրանով իսկ այն դադարում է ներկայացչական մարմին լինելուց և իր 4+1+1 «ակադեմիական» կազմով փաստորեն չի արտահայտում բուհական հանրության շահերը:
- ▶ Նախարարությանը փաստացի հնարավորություն է տրվում կանխորոշելու ռեկտորի ընտրությունը: Արմատական բարեփոխումների փուլում դա կարող է ընդունելի տարբերակ համարվել:

Սակայն, այդ դեպքում գերադասելի է գնալ ռեկտորների ուղղակի նշանակման, քանի որ նման պարագայում նշանակողն անմիջական պատասխանատվություն է կրում նշանակվածի աշխատանքի արդյունքների համար, այնինչ առաջարկվող տարբերակում, փաստացի նշանակում իրականացրած մարմինը ֆորմալ առումով պատասխանատու չէ խորհրդի «ընտրած» կադրի համար:

► Մյուս անցանկալի, բայց հնարավոր տարբերակը խորհուրդը երկու խմբի բաժանվելն է՝ 6-ն ընդդեմ 6-ի, որը կարող է կաթվածահար անել խորհրդի աշխատանքը (նման դեպքեր արդեն իսկ հայտնի են Լույսիսկ ներկայիս ընդլայն կազմով): Այստեղ, բացի կազմի ընդլայնումից, անհրաժեշտություն է առաջանում այն համալրել անկախ անդամներով (խոշոր գործարարներ, միջազգային համարում ունեցող գիտնականներ), որը կբացառի Կառավարման խորհրդի «երկուսակցականությունը»:

► խորհրդի կրճատված կազմը ի վիճակի չի լինի իրականացնել իրեն վերապահված տարատեսակ՝ գիտական, ուսումնական, ֆինանսական և այլ վերահսկման գործառնությունները, քանի որ չի կարող ունենալ դրա համար անհրաժեշտ մասնագիտական կադրեր: Այնինչ, խորհուրդը պետք է հնարավորություն ունենա իր անդամներից կազմավորել առանձին հանձնաժողովներ, որոնք պատասխանատու կլինեն առանձին բնագավառների համար:

Այստեղից բխում են Կառավարման խորհրդի գործունեությանը վերաբերող մյուս անհրաժեշտ քայլերը.

- Առավելագույնս հստակեցնել խորհրդի գործառնությունների/լիազորությունների շրջանակը.
- Նախատեսել աշխատանքային հանդիպումների բարձր պարբերականություն.
- Սահմանել խորհրդի անդամների պատասխանատվության Նորմեր, որոնց խախտման դեպքում պետք է գործադրվի ռոտացիայի հրապարակային մեխանիզմը: Այդ թվում, անհրաժեշտ է նշել, ովքեր են իրավասու հարց բարձրացնել խորհրդի անդամի փոխարինման մասին:
- Սահմանել խորհրդի արտաքին և ներքին անդամների ընտրության ֆորմալ չափանիշներ.

- ▶ Ապահովել խորհրդի անդամների ընտրվող մասի ընտրության թափանցիկությունը և մասնակցայնությունը (հայտարարություն, մրցույթ և այլն)։
- ▶ Կանոնակարգել որոշումների կայացման գործընթացը։

Բ. ԿԳՄՍ Նախարարության, բուհի վարչական ապարատի և դասախոսական կազմի համագործակցությունը

Պետք է նկատի ունենալ, որ այսօրվա փոփոխությունները չեն վերաբերում միայն բուհական համայնքը գաղափարական և պետական վերահսկողությունից ազատելու խնդրին: Խոսքն ավելի շուտ պետության և բուհերի միջև նոր պայմանավորվածության ձեռքբերման մասին է:

Անհրաժեշտ է իրականացնել համագործակցության այնպիսի մոդել, որի դեպքում բուհի ակադեմիական կազմը չընկալի բուհի վարչական մարմինը որպես նախարարության ուղարկած «միսիոներների», որոնք եկել են իրենց «բռնի կերպափոխելու», այլ որպես համախոհների, որոնց հետ ընդհանուր գործ են անում:²⁶

Գ. Ֆինանսավորումը

Որքան էլ ցավալի է, պետք է խոստովանել, որ ՀՀ կրթությունը աղքատության տնտեսության լավագույն պատկերն է: Բնական է, որ բուհական համակարգի աքիլեսյան գարշապարը մնում է ֆինանսավորման հարցը: Այն հանգամանքը, որ ֆինանսավորման հիմնական մասը գալիս է ուսման ճնշումներից, որը հանգեցնում է ուսանողների՝ ուսման նկատմամբ պահանջկոտության կտրուկ անկման, ստեղծում է հակասություն, որի լուծման հնարավորությունները ակնհայտ չեն: Մի բան պարզ է, որ ֆինանսավորման դժվարին խնդիրը առանձին բա-

26 Դրա հետ կապված վտանգներից կարող է լինել բուհերի վարչարար կազմի ոչ ադեկվատ ինքնագնահատականը: Այս միտումի համարյա զվարճալի դրսևորումներից է բուհական ինքնավերլուծականներից մեկում տեղ գտած SWOT գնահատականը, ըստ որի՝ բուհի թուլությունը դասախոսներն են, քանի որ նրանք կենտրոնացած են բուհի ներքին խնդիրների վրա, իսկ ուժը՝ վարչական կազմը, որը նոր հնարավորություններ է փնտրում բուհից դուրս:

Նալի լուծում չունի: Որքան էլ պետության հնարավորությունները սահմանափակ են, անհրաժեշտ է մտածել այն մասին, որ բուհերին հատկացվող պետական միջոցների մասը աճի՝ նախ և առաջ դրամաշնորհների հաշվին, որոնք պետք է տրամադրվեն մրցութային կարգով, խիստ ֆորմալացված չափանիշների հիման վրա: Խնդրին կարող է օգնել նաև խոշոր գործարարներին Կառավարման խորհուրդներում ներգրավելը, եթե նույնիսկ մինչ այժմ եղած հատուկ նստ փորձերը դեռևս շոշափելի արդյունք չեն տվել (այստեղ կարող է օգտակար լինել նախնական պայմանավորվածությունը՝ գործարարը մուտք է գործում Կառավարման խորհուրդ ֆինանսական աջակցության հանձնառությամբ): Արդյունավետ միջոց կարող են լինել նաև «բիզնես-պատվերները», այսինքն՝ աշխատաշուկայի շահագրգիռ ներկայացուցիչների կողմից առանձին մասնագիտությունների գծով կրթաթոշակներ սահմանելը: Ընդհանուր մոտեցումը պետք է հիմնված լինի ֆինանսական աղբյուրների դիվերսիֆիկացման և ներքին օղակների ֆինանսական ինքնուրույնության ավելացման վրա:

Գ. Շուկա և «ինքնություն»

Բուհի և աշխատաշուկայի միջև գոյություն ունեցող խորը անջրպետը ընդունում են հարցազրույցներին բոլոր մասնակցածները: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է բազմասպեկտային և խորը ուսումնասիրություններ: Բուհ – աշխատաշուկա կապի բացակայության խնդրի լուծմանն են ուղղված այնպիսի ինստիտուտներ, ինչպիսին են՝ փորձաշրջանները, պետպատվերները, պետական կրթաթոշակները և այլն: Այս բոլոր համակարգերն ունեն ոչ միայն բարեփոխման, այլ նաև վերափոխման համակարգում խնդիր: Բուհական համակարգում շոշափելի փոփոխություններ իրականացնելու համար անհրաժեշտ է բազմակողմանի համագործակցություն պետական մարմինների, բուհերի, միջազգային տարբեր կազմակերպությունների և քաղաքացիական խմբերի միջև:

Առանձին մեծ խնդիր են այն բնագավառները, որոնք ենթակա չեն շուկայական կարգավորման: Խոսքը բոլոր այն մասնագիտությունների մասին է (բանասիրություն, պատմություն, փիլիսոփայություն, տեսական բնագիտության ֆունդամենտալ ոլորտներ և այլն), որոնցից

անհնար է հրաժարվել, չնայած դրանց դոտացիոն բնույթին: Այստեղ ոչ միայն պետք է գտնել ձևեր այլ բնագավառների հաշվին սրանց ֆինանսավորելու, այլև ձևավորել նոր կառուցվածքներ, որոնք հնարավորություն կտան պահպանել մասնագիտությունը առանց մեծ ֆակուլտետներ պահելու: Հեռանկարում այդպիսի կառուցվածքների դեր կարող են կատարել բուհերի կազմի մեջ մտնող միջգիտակարգային (ինտերդիսցիպլինար) ինստիտուտները, որոնք կարող են առաջարկել մի քանի կրթական ծրագրեր և սպասարկել միանգամից մի քանի ֆակուլտետ (մասնագիտություն): Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ այդ դժվարին խնդրի իրականացմանը հնարավոր կլինի ձեռնամուխ լինել միայն դրանց հղացքի մանրամասն մշակման և փորձարկման հիման վրա:

Դ. Սերնդափոխություն

Այս և նման հարցերը մշակելիս պետք է հաշվի առնել, որ տարբեր ոլորտներում ամկա խնդիրները փոխկապակցված են բազմաթիվ և երբեմն անսպասելի կապերով: Այսպես, օրինակ, ակնհայտ են բուհական աշխատողների ցածր աշխատավարձի հետ կապված երկու պրոբլեմ սոցիալականը (ցածր կենսամակարդակը) և աշխատանքի արդյունավետությունը: Սակայն քիչ նկատելի է, որ նույն այդ երևույթը խաթարում է բուհական աշխատողների բնականոն սերնդափոխությունը, քանի որ երիտասարդ որակյալ մասնագետները պարզապես պատրաստ չեն աշխատելու այն աշխատավարձով, որ ստանում են տարեցները: Հիմնականում գալիս են նրանք, ովքեր իրենց ցածր որակավորման պատճառով, բուհից դուրս աշխատանք չեն գտնում: Իսկ քանի որ սերնդափոխությունը միևնույն է կատարվում է, մարդկանց մոտ տպավորություն է ստեղծվում, որ տարեց դասախոսին երիտասարդով փոխարինելու միակ դրդապատճառը նրա տարիքն է:

Թեև տարեց դասախոսների՝ ամեն գնով բուհում մնալու ձգտման հիմքում նախ և առաջ նյութական գործոնն է, այնուամենայնիվ չի կարելի անտեսել նաև խնդրի բարոյական կողմը: Այստեղ օգտակար կլինեն ներդրել փորձի փոխանակման և սերնդափոխության այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան դասավանդումն ավարտած

դասախոսներին պահպանել բուհի հետ իրենց առնչությունը և սահուն ու արդյունավետ կդարձնեն սերնդափոխության գործընթացը:

Ե. Հաղորդակցական տեխնոլոգիաներ

Ուշադրություն պետք է դարձվի նորագույն հաղորդակցական տեխնոլոգիաները ուսումնական պրոցեսներում օգտագործելու կերպին: Դժվար է դասախոսներից պահանջել համատարած անցում նոր մեթոդների, եթե բուհը չի ապահովում դրա համար անհրաժեշտ տեխնիկական պայմաններ՝ համակարգիչներով և պրոյեկտորներով լսարաններ և առավագն մի քանի համակարգչային սրահ դասախոսների և ուսանողների համար: Պարզապես պետք է նկատի ունենալ, որ տարբեր բուհերի ուսանողները (ևսև դասախոսները) տարբեր կյոթական հնարավորություններ ունեն, և բոլորը չէ, որ կարող են իրենց թույլ տալ անձնական կոմպակտ համակարգիչներ կամ սմարթֆոններ ունենալ:

2. Ուսումնական և գիտական

Բարձրագույն կրթության և գիտության ոլորտների մերձեցման և ի վերջո միավորման ինդիորը կասկած չի առաջացնում արդեն իսկ այն պատճառով, որ որակյալ բուհական ուսուցումն ինքնին հնարավոր չէ առանց արդիական գիտական բովանակության: Սակայն, այդ գործընթացը նախաձեռնելիս անհրաժեշտ է նկատի ունենալ այն ինստիտուցիոնալ կոշտ բաժանումը, որի պայմաններում պատմականորեն զարգացել են մեզանում այդ երկու բնագավառները: Ինքնին դրանց կոնվերգենցիան իրականացնելիս նպատակահարմար է թվում նկատի ունենալ հետևյալ հանգամանքերը և հնարավոր քայլերը.

- ▶ Միավորման վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում գործել փուլ առ փուլ.
- ▶ Ստեղծել բուհերի և ակադեմիական կառույցների միջև համատեղ գիտահետազոտական ծրագրեր.
- ▶ Ստեղծել հետազոտական կենտրոններ բուհերի ներսում.
- ▶ Մաքսիմալ ինքնուրույնություն տալ այն գիտահետազոտական հիմնարկներին (ԳԱԱ ինստիտուտներին), որոնք ունակ են ինքնուրույն գոյատևելու՝ գիտական և ֆինանսական առումով.

- ▶ Խթանել Ակադեմիայի թույլ կառույցների ինտեգրումը բուհական համակարգ.
- ▶ Չգուշանալ Կրաստանի օրինակից, որի նեոլիբերալ կառավարության որոշումը ակադեմիական ինստիտուտների և բուհերի արագ և համատարած միավորման մասին ոչ միայն հանգեցրել է գիտության համակարգի առվազն մասնակի խարխլմանը, այլև ահռելի սոցիալական բողոքներ է առաջացրել.²⁷
- ▶ Պետական կամ համալսարանական մակարդակով ապահովել գիտականների մուտքը միջազգային գրադարաններ.
- ▶ Հետամուտ լինել միասնական գրադարանային բանկերի ստեղծմանը և խթանել դրանց զանգծվածային օգտագործումը: Առաջարկել մշակելու տեխնիկական միջոցներ բուհական և ակադեմիական գրադարանների ցանցային ծառայությունների սինխրոնացման և նրանց ընդհանուր ցանցի մեջ միավորելու համար:
- ▶ Առաջին շրջանում բուհական դասախոսների համար կազմակերպել գրանտային նախագիծ-առաջարկությունների պատրաստման կենտրոնացած ուսուցում.
- ▶ Խրախուսել բուհական դասախոսների մասնակցությունը միջազգային գիտաժողովներին՝ եթե ոչ ֆինանսական, ապա առնվազն կազմակերպչական առումով:

Է. Տեղեկատվական բանկեր և մոնիտորինգ

Անհրաժեշտ է աշխատանք տանել կրթության համակարգի գործունեության շուրջ տեղեկատվական ընդհանուր բազայի ստեղծման ուղղությամբ: Մինչ այժմ վարչական որոշումների կայացման համակարգում, հավաստի հետազոտական տվյալների և վստահելի փաստերի վրա հիմնված վերլուծական տեղեկատվության ֆրագմենտարության ու սակավության պայմաններում, գերակշռել է ինտուիտիվ և իրավիճակային որոշումների կայացման մեխանիզմը: Արդյունքում կրթության համակարգի զարգացման հիմնական միտումները քառասյին բնույթ են ձեռք բերել: Կան ոլորտներ, որտեղ մեծ ծավալներով փոփո-

27 Կրաստանում բարձրագույն կրթության բարեփոխումների մասին տե՛ս <http://archumanities.am/category/video/bardragouyn-krtoutyan-himnakhndirner-yay-89,այց՝> 1.12.2019:

խություններ են տեղի ունեցել (օրինակ՝ կրեդիտային-վարկանիշային համակարգի ներդրումը), բայց կան նաև ոլորտներ, որոնք գործառնում են դեռևս խորհրդային տարիներից եկող ռեժիմով (օրինակ՝ կրթական ծրագրերի ոլորտը): Այդ անհամաչափությունը ստեղծել է պարադոքսալ վիճակ: Մի կողմից՝ առկա են գործոններ, որոնք մեծացնում են համակարգի քառասյին բաղադրիչի սիներգետիկ էֆեկտը, որը պայմանավորվում է ինչպես համակարգի փոխակերպումների իրական հետևանքների վերաբերյալ տեղեկատվության սակավությամբ, այնպես էլ ցանկացած հնարավոր աղբյուրից ակնթարթային «այստեղ և հիմա» շահույթ ստանալու ձգտումով: Մյուս կողմից՝ առկա են գործոններ, որոնք առաջ են գալիս զուտ ձևական սխեմատիկ ցուցանիշներին ցուցադրաբար հետևելու արդյունքում վերևից իջեցված հրահանգների հիման վրա: Վերջինիս ցայտուն օրինակներից է Բոլոնյան սկզբունքների ֆորմալ կիրառությունը:

Ստեղծված իրավիճակի հաղթահարման կարևոր միջոցներից է մշտական մոնիտորինգի կիրառումը: Սակայն, նկատի ունենալով պաշտոնական կառույցների բյուրոկրատական վարչարարությունը, երբ չափանիշները հավասարապես առաջադրվում և ստուգվում են՝ «թղթի վրա», անհրաժեշտ է պետական մոնիտորինգը լրացնել քաղաքացիական հասարակության կառույցների կողմից իրականացվող մշտական վերահսկողությամբ:

Ը. Ճանապարհային քարտեզ

Նշված բարդագույն խնդիրների լուծումն իհարկե անհնարին կլինի առանց կրթության և գիտության բնագավառների բարեփոխման համապարփակ հղացքի մշակման: Բայց նույնիսկ դրա առկայությունը բավարար չէ: Խնդիրը միայն այն չէ, թե ինչ ենք ուզում ստանալ վերջնակետում, այլ նաև այն, թե ինչ ճանապարհային քարտեզով ենք պատրաստվում շարժվել ցանկալի ուղղությամբ: Սա է, որ խնդիրը բաժանում է առանձին ոլորտներում կատարվելիք բազմաթիվ քայլերի, որոնցից յուրաքանչյուրը պետք է հարաբերվի ինչպես ընդհանրական կոնցեպտի, այնպես էլ բուհերում տիրող իրավիճակի և ակադեմիական համայնքի սպասելիքների հետ:

The project “Higher Education in Armenia: Problems and Perspectives” was implemented by the Armenian Research Center in Humanities (ARCH) in cooperation and with funding of the Konrad Adenauer Foundation, as well as overall support of European Endowment for Democracy. It became the first of the four planned sequels that aim to continue and deepen the results of the ARCH conference “Armenia 2018: Realities and Perspectives” (Jun 2018). The purpose of the project was to reveal the painful problems in higher education and to identify the specific mechanisms that cause them. Participants strived to avoid the formal, ornamental formulations we often use, asking not only what kind of education system we want to get tomorrow, but also – no less important – where we are today. This approach made it possible to move from the present model, overloaded with many tangles, to that of the future, without losing the positive elements of the legacy of the past and facing the challenges of the modern life.

The project was focused on the following four topics:

- ▶ The status of universities and their place in society; university financing and self-sufficiency;
- ▶ Current situation in Armenian HEIs and the strategy of the Government of Armenia in the field of higher education;
- ▶ Employment and social problems: perspectives for the graduates;
- ▶ From teaching universities to research centers.

The project started in August 2019 with focus-group discussions on these issues, interviews with stakeholders and those responsible in the field. This part of the work concluded the workshop where eight experts presented the results of their short-term research. Another panel of the workshop was dedicated to the experts invited from Belarus and Georgia, who presented the experience of the higher education reforms in their respective countries. The results of the work done were analyzed and summarized as Recommendation Paper that the reader is holding. The Paper will be presented to the Ministry of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia, educational institutions and other stakeholders.

The videos of the reports and discussions are available on the ARCH website at the following address: <http://archhumanities.am/en/category/video>, accessed 10.12.2019.

Նախագծի ղեկավար՝

Աշոտ Ռսկանյան, փիլիսոփայության դոկտոր, դոցենտ, Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի նախագահ

Նախագծի համակարգող՝

Սիրանուշ Դվոյան, բանասիրության թեկնածու, դոցենտ, Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի գիտական ծրագրերի համակարգող

Փորձագետներ

Լուսինե Խառատյան, մշակութային մարդաբան, ԳԱԱ Ազգագրության և հնագիտության ինստիտուտ

Աննա Գևորգյան, բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ Erasmus+ ծրագրում

Միշա Թադևոսյան, բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ Erasmus+ ծրագրում, Կրթական քաղաքացիական նախաձեռնություն

Սերոբ Խաչատրյան, ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի ասիստենտ

Դավիթ Պետրոսյան, քաղաքագետ, Ռեստարտ ուսանողական քաղաքացիական նախաձեռնություն

Յուրի Ավագյան, սոցիոլոգ, Ռեստարտ ուսանողական քաղաքացիական նախաձեռնություն

Նունե Դիլանյան, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի դասախոս

Գոհար Ավետիսյան, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ասիստենտ

Ձևավորումը և էջադրումը՝

Լուսինե Նավասարդյանի

2019

ISBN 978-9939-9238-0-2



9 789939 923802